



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԵՏՐԱՏԻ  
ԵԳԱՆԱԳԻՆ  
ԼՐԱԴՐԱՆ

8965

N.23—24

ԶԱՄԵԼ ՑԵՍԱՑԱՆ

ԿՐԱԿԵ ՇԱԳԻԿԵ


891.99

Ե-58

ՊԵՏՐԱՏԻ ԵԳԱՆԱԳԻՆ ԼՐԱԴՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

1934



ՊԵՏՎՐԱԾԻ ԵԳՈՒՅՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 23—24

№ 23—24

891.99

6-58

ԶԱՐԵԼ ՑԵՍԱՑԱՆ

Ա-7

## ԿՐՈԿԵ ՇԱՊԻԿԵ

(1006  
28404)

6851

2003

2451.

ՊԵՏՎՐԱԾԻ ՀՐԱՅԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1984

Ավատ Խմբագիր՝ Ս. Հարությոնյան  
Յեկա Խմբագիր՝ Տ. Խաչվանքյան  
Մթբագիր՝ Ա. Յերիցյան

27501-Կ-3



10720-57

Հրատարակ. № 2797 Գլուխիս 8368(բ),  
Պատվեր № 2510, Տիրաժ 5000. Պետ-  
հրատի տպարան. հանձնված և արտա-  
դրության 10/XII 1933 թ. ստորագրված  
և տպագրության 27/I 1934 թ.

## ԶԱՐԵԼ ՑԵՍԱՑԱՆ

Զավել Յեռայանը արևմտյան հայոց գրականության մեջ առաջնակարգ մի անուն ե իբրև վիպասան և հրապարակախոսության ծննդել ե 1878 թվին Պոլսի Սկյուտատը տրվարձանում և հայունական կը թությունն ստացել ե նույն արվարձանի Ս. Խաչ վարժարանում Տասնեւելթը տարեկան հասակում մեկնել է Պարիզ շաբունակելու բարձրագույն ուսումը՝ հետեւելով Սորբոնի գրական ֆակուլտետի դասախոսություններին և այս քան Պարիզ մեկնելը, 16 տարեկան հաստկում, առաջին անգամ տպագրել ե իր արձակ բանաստեղծություններից մեկը Զավել Հովհաննիսյան ստորագրությամբ (նրա աղջկության ազգանունը), վորն իր ժամանակին ուշադրության ե արժանացել Պոլսահայ ժամուռի կողմից:

Պարիզում նետպնետե Զավել Յեռայանը հրատարակել ե արդեն ափելի ընդարձակ յերկեր—վեպեր, վիպակներ և պատմվածքներ («Կոծծ հանճարմեր», «Ծնորինվ Մարդիկ», «Սպասման պրակին միջ» և այլն) և ճանաչված ե իբրև տաղանդավոր կին վիպասան։ Զավել Յեռայանի գրականությունը իր ժագման առաջին որեքից սեռլիստական ե, հոգեբանական խորացությունով։

Ոսմանյան Սահմանադրության հաչակումից հետո (1908 թ.) Յեռայանը մեկնում է Պոլս, վորտեղ, մինչև իմպերիալիստական պատերազմը, զբաղված ե գրական և հասարակական գործերով։

Այս օրջանի նրա գրական գործերից են «Սկյուտարի վերջալույսներ», «Ավերակներուն մեջ», «Քաջը», «Անձկուրյան ժամեր», «Բավական ե», և բազմաթիվ այլ պատմվածքներ։

Պատերազմի տառաջին տարին Պոլսում, և ընդհանրապես Թուրքիայում, սենդզված դեմքերի հետևանքով վիպաստանունին ստիպված ե լինում փախչել Պոլսից և Բալկանների վրայով գաւառ և կովկաս առաջին անգամ։

Կովկասում նրա գրական գործերից հայտնի յեւ «Վերջին քաժակ» վեպը։

1919 թվին Զապել Յեսայանը նորից անցել է Յեղոսկա, Պարիզ փոքտեղ հետաքրքությամբ և վոդեվորությամբ հետեւ լով ֆրանսական առաջապես գրողների քաղաքական գիրքավորումին՝ հարել և գեղի խորհուրդների իշխանությունը, վերջնականապես իշխն կապելով հեղափոխական պլրութարիատին:

Մինչև 1926 թ. նա հրատարակել է «Հօգիս սխառյալ», «Նահանջաղ ուժեր» և «Մելիմա Նորի Հանրը» վեպերը: 1926 թվին այլ ցեղել և Խորհրդային Հայաստան և Պարիզ վերապահալուց հետո գրել և «Արամերես ազատագրված» գիրքը, Խորհրդ Հայաստանից ստացած տպագրությունները:

Մինչև վերջնականապես Խորհրդ Հայաստանում հաստատվելը 1933 թ., Յեղուապայում Զապել Յեսայանը ակադիվ պայքար և մըղել խորհուրդների իշխանության բոլոր ահօակի դասակարգային թշնամիների, և հատկապես հայ հականեղափոխական Դաշնակցության դեմ:

Զապել Յեսայանը այժմ 55 տարեկան է, բայց բոլորում և իր գրական և հասարակական դործունեցության ամենից բեղուն զբանը նա ունի անտիպ յերկների մի զարդ՝ «Նոր եխանամերը», «Շահաբեդիմի յնապար», «Թրքական կյանքի պատկերներ» և «Միլիեստարի պարտեզները», վորոնք վերին աստիճանի շահեկան յերկները են: Վերջինը, «Սիլիխտարի պարտեզները», Նրա յերեք հատոր հիշողությունների առաջին հատորն է, ընդարձակ մը աշխատություն, վորպատկերում և Պոլսի 80-90-ական թվականների դրական-հասարակական կյանքը:

Այս վեպակը, «Կրակե շապիկը», վոր առաջին անգամ հրատարակված և Պարիզի «Արշավ» թիւթում և արտատպված և խորհրդային հրատարակությամբ՝ «Վերիլում» և այժմ ել տպագրվում է առանձին գրքույկով, Զապել Յեսայանի լավագույն դրվածքներից մեկն է, վորտեղ սեալիստական դժերով պատկերում և շահադործվող մարդկանց առաջին վոքքի լըմբոստությունները, պատմական իրականության սահմաններում մնալու խիստ ձգտումով:

Այն ժամանակ հազիվ տասը տարեկան ելի: Մենք  
կընակեցինք Սլուտար, միահարկ, խարխլած ու փայտա-  
շեն տուն մը, վոր կգտնվեր Պյուլպլու Տերեսիի վերևը  
էրկարող տուներու շարքին մեջ:

Ամառ թե ձմեռ ձորին մեջեն կթավալիր թանձր և  
մթաղուէն աղըը, դանդաղ ընթացքով: Զեմ գիտեր ին-  
չու այդ գարշահոտ և բաց կոյուղին, վորուն անունով  
կկոչվեր թաղը, կկըեր այդքան բանաստեղծական  
անուն: Թերևս միայն այն պատճառով, վոր ձորեն անդին  
կտարածվեր թրքական գերեզմանատունը և վերուն  
մշտադաւար և տիսրատեսիլ նոճիներուն մեջ բուն դը-  
րած ելին սոխակներ:

Իմ մանկությունս անցած և այդ ձորին վերեի  
ափունքներուն վրա: Թաղին բոլոր էրեխաները զեռ  
իրենց որորոցներեն շնչած են անոր գարշահոտությու-  
նը: Ավելի ուշ, անոնք կաճեցին և կմեծնային պղտոր  
խոնավությունով թրծված զառիթափներուն վրա,  
վորոնց նույնիսկ սիպ դարվարները ընտանի դարձած  
ելին մեր ճապուկ քայլերուն:

Ամառվան մեջ, յերբ հարավային քամի կիչեր,  
մեծերը լերեաները կթթվեցնելին և իրարու կըսելին  
լսու եւ Այդ բառը ինձ սարսափ կպատճառեր, այդ  
որերուն մայրս ավելի սրտնեղ կդառնար, հորս մարած  
աչքերը ավելի կհուսահպտելին և չնչին պատճառը մը  
առիթ կըլլար, վոր մայրս կատաղությամբ հարձակեր  
հորս չքավորության վրա, Գանգատներ և հուսահա-

տական աղաղակներ կալայթելին տանը տրտում մըթ-նոլորտին մեջ, ընդմիջված զառաշուն ապտակներով, վոր իմ կամ քեղրաբներուս ալտերը կընդունելին ան-տրտունջ:

Այդ որերուն Պլուլպչուլ Տերեսիի գարշահոտությունը անհանդուրժելի կդառնար: Յերբեմն ալ քամիի ալիք մը դիմացի գերեզմանատունեն մինչև մեզ կըներեր ուրիշ տեսակի արտաշնչում մը: Մայրս խորհրդավոր և սարսափահար լերեռութ մը կառներ, լերբեմն նույն իսկ մեզ կփակեր տան մեջ և կըսեր.

— Դուրս մելլեք, կոռևլը\*) նոր սատակ\*\*) թաղեր են:

Այդ որերուն, իրիկունները, լերը հայրս ու մայրս կխոսակցելին իրենց անհատնում հոգերուն վրա, մորս շեշտը ավելի դառն եր և հորս պատասխանները ավելի վհատ:

— Մարդ աստուծո, կըսեր մայրս, հուսահատությամբ ձերքերը ծունկերուն զարնելով, ճար ճարակ ըրե, մախարմներս\*\*\*) ազատե աս դժոխքեն:

Հայրս լուռ կլսեր, գլուխը մեկ կողմին հակած և իր արևահար ճակտին վրա ունքերը կրարձրանալին, կպսստելին, լերբեմն ալ հանկարծ կպարզվելին, իրեն տալով լսածներեն ապշած մարդու արտահայտություն:

Ճարը չի կար: Զքավորությունը չոքած եր մեր ընտանիքին վրա, ինչպես մշտատե պատուհաս: Հայրս լազմաճի լեր և չարաշար կաշխատեր. ամեն առավոտ

\*) Պոլսո ժողովրդական բարբառով կնշանակե թուրք գերեզմանատուն:

\*\*) Իբրև արհամարհանքի արտահայտություն՝ թյուրք մեսելը կկոչելին սատակ:

\*\*\*) Անմեղ, տկնարկելով յերեխաններուն:

մութնուլուսին կերթար Գել Նիկողոսին փավլիքան, այնտեղ ներկ կպատրաստեր, բազմաները խազան կըներ, ամառվան տոթին և ձմեռվան ցուրտ ու բուքին բանվածները կտաներ ծովեղերք՝ լվալու համար և թացերը կոնսկը բնոցած զառիվերեն կելլեր տրյուն քրտինք թափելով։ Մայրս ալ կաշխատեր, բեզկյանի վրա բազմա կրաներ, հակառակ զար վեց զավակի տեր եր և տանը բոլոր հոգը իր վրա չեր։

Ձմեռվան յերկար գիշերներուն, յերբ մեր անկռողինները կփռեցին հատակին և զույգ զույգ կպառկեցինք. մայրս կշարունակեր աշխատիլ մինչև ուշ ատեն, լամբալի վտիտ լույսով։ Հայրս բազմոցին վրա յերկարած, պահ մը կմրափեր, հետո կարթննար ու կըխսաւկցելին։ Քուլը եր և յեղբայլներս շատոնց քնած կըլալին, բայց իմ քունս թեթև եր և կջանալի հետեիլ ըստած խոսքերուն։

Յերբեք չեմ լսած, վոր այր ու կին իրենց ալդ մտերմական ժամերուն անուշ խոսք մը ըսեն իրարու։ Անոնք յերկարորեն կորոճալին իրինց մտմտուքները. մայրս հոգնութենե տքալով, ակրաները սեղմած, մեկ կողմեն կտատաղնեթյամբ կրաներ և մյուս կողմե հորս անկարողության առաջ, անխնա կշարեր սպառնացող հոգերը. պարտատերեր, վոր վաղը «գուռը ձեռք պիտի առնեյին», ածխավաճառը, վոր մերժեր եր ապառիկ տալ, հացագործը, վոր ձիուն սանձը քաշեր գացեր եր առանց հաց ձգելու...»

Հայրս խոր հառաջանք մը կարձակեր և յերբեմն ալ կըսեր.

— Զիկալին աչքը քըոռնա...»

Այն ատեն մայրս, գերապրգոված, գործը կընդ-

հատեր, թեզկահը անդին կհրեր և վոտքի կանգնելով,  
կդոչեր.

— Այ մարդ, չըսես, աղքատությունը կրակե շապիկ եւ

Մորս վտիտ իրանը սենյակին կիսաստվերին մեջ  
կարծես աներեոյթ զորության մը կղիմադրեր, աչ-  
քերը հրացալու, կզակը ցցված, խելագարի պես կնայեր  
ասդին անդին, հայրո քնաթաթախ աչքերով կհետեւր  
անոր շարժումներուն և կամացուկ մը ձեռքը կտաներ  
իր ցավոտ վոտքերուն, վորոնք կկուկծեցին խոնավ և  
կարկտված գուլպաներուն մեջ:

Մորս բարկությունը միշտ ինձ անձկություն  
կպատճառեր, սիրոս կսեղմվեր և կուզեչի պոռաւ բայց  
ալդ բարկության իմաստը չեցի հասկնար: Գիտելի, ոհ,  
շատ լավ գիտեցի, վոր անհաղթելի դժբախտություն  
մը կծանրանար մեր ընտանիքին վրա: Գիտելի, վոր  
հոգ մը կար, ձնշիչ հոգ մը, վորուն լուծը կըաշեցին  
մեծերը, յերեկն համբերությամբ, յերբեմն ըմբռատա-  
նալով: Այդ ցավը մեր ամենուս յերկվորյակ լեզրալըն  
եր, մեզ հետ աշխարհ յեկած եր, մեզ հետ կմեծնար,  
ավելի ուշ հասկցա, վոր ան իր բազմատեսակ յերես-  
ներով քստմնելի չքավորությունն եր, և այն որեն վոր  
հասկցա, իմ վրաս առի հաղթել ալդ հրեշին:

Բայց ան ժամանակ փոքր ելի և մատղաշ Յերբ  
ծնողքս կըսեցին. «Հայի մը փարա ճարենք...» կամ,  
իբր հուսահատորեն կհուսային, վոր «գործերը քիչ մը  
բացվին...», չելի կընալ ըմբռներ վոր իրավամբ չարա-  
չար աշխատանքով չոր հացի մը փարա կվաստիկ-  
լին և թե գործերը բացվելին թե վոչ, իրենց և իրենց  
պեսներու համար վորես հուսալիք բան չի կար:

\* \* \*

Բացի լերկու փոքրիկ քույրերես, վերոնցմեն վերջինը  
դիա ծծկեր եր, մենք չորս մանչերս կերթայինք թա-  
ղալին վարժարան: Մենք ձրէ չեյինք: Մայրս լերբեք  
չե զիջած լերթալ դիմումներ կատարել «աղա»-ներուն:

Դպրոցին մեջ, սրահին պատերուն վրա կախված  
գեղագիր ընաբարնները, վարժապետին խոսքերը, ըսկած  
առակները և լեղած ընթերցումները նպատակ ունիյին  
մեզ առգործու այն դպայումով, վոր օռւամուն-  
քով և աշխատանքով մարդս կհասնի ամեն  
բանի: Յես լեռանդով ու ջանքով կուզեյի ձեռք բերել  
ալդ ուսումը Յեղբայրներս անտարբեր ելին այդ բո-  
լորին. — անոնք կյանքով և ուժով թցուն, շարժման  
մեջ կղնելին իրենց բոլոր Փիզիքական և մտային կարո-  
ղությունները խաղերու և ծեծկուքներու: մեջ: Անոնք  
կերպով մը կանցընելին դասերու ժամերը ինչպես պար-  
տադիր անախորժություն և անմիջապես կվազելին  
զբոսանքի: Յերեկոյին, յերբ կարձակվելինք, անոնք  
ուրիշ մանչերու հետ ուսմքի պես գուրս կնեստվելին  
դպրոցեն և դեռ տուն չի հասած, փողոցներու մեջ  
անձնատուր կըլլային դանազան շահատակլություն-  
ներու, և վայ անոնց, վոր իրենց ճանքան կտրելին  
կտմ արգելք ըլլալ ուղելին: Յես թեև հիացումով կեն-  
տելի անոնց խաղերուն, բայց մասնակից չելի ըլլար,  
վորովնեաև կշտապեյի տուն դասերս պատրաստելու:

Մայրս անտարբեր եր թե իմ փութաջանությանս  
և թե մյուս տղաքներուն անզուսալ վարմունքին: Կրա-  
վեր, վոր զինքը չխանգարելինք իր անդադար աշ-  
խատանքին մեջ: Զիմ հիշեր մալրական զորովու համ-

բուլը մը, կամ ժայիտ մը ԱՇ, թող ըսեն ինչ վոր կուզեն, թող խոսին ու գրեն մանկության քաղցր հիշողություններու վրա...

Ասոնք անծանոթ են անոնց, վոր ակուները սեղմած, կուրծք կուրծքի անդադար կկռպին կյանքի դըժվարություններու դեմ: Մայրս ժամանակ չուներ գուրգուրալու իր զավակներուն վրա: Նույնիսկ լեռք փոքրիկ քուլը կճշար որորոցին մեջ, միաւն սրանեղություն կերևար մորս խոժոռ դեմքին վրա: Յերբ ճիշերը շատ քարձրանային, կառներ մանկիկը, ծիծ կուտար և ինքը ակնապիշ կմնար, մինչև վոր յերեխան հագենար: Աչսոր միայն կհասկնամ, վոր իր արյունը կչորանար քրտինք թափելով մեզ համար, այսոր կգիտակցիմ, վոր իր կյանքը մաշած և մեզ համար. բայց այն ատեն իմ մանկական հոգիս անհագ կարուտ ուներ գուրգուրանքի և մորս դաժան կամ թթված դեմքը մոայլ տիսրություն կներշնչեր ինձ: Բայց չես նողատակ մը դրեր եյի իմ կյանքիս և կմխիթարվեյի՝ ինքինքս դգալով դորեղ՝ դալիք որերու մեջ:

Հայրս ընդհակառակն մեղմն եր և կարծես պատրաստ եր սրտազեղումնը ունենալու: Այն ժամանակ հազիվ քառասուն տարեկան եր, բայց իր մարդկային կերպարանքը կորսնցուցած եր ծովի աղի քամիին հարվածներուն տակ: Սև և տիսրը աչքերը մարած ելին: Ճերմկած և ցանցառ մազերը կփակելին դագաթին և քունքերուն: Անիկա լուակյաց մարդ եր և իր զգացումները և մտածումները կարտահայտեր աչք ու հօնքով: Իր ճակատի բազմածակ կնձիռները կկծկվելին կամ կպարզվեյին և այդ ոլարագային աժգույն զիծեր կը կազմելին արեահար ճակատին վրա: Անոր խունացած և

կարկտանելով պիտակված հագուստները վոչ գույն ունեցին և վոչ ձե, և այդ բոլորեն կարտաքուրեր բարեկ հոտ մը աղի քրտինքի և բոթասի, վոր ինձ սիրելի լեռ և ընտանի, վորը գերազանցապես հայրս եր Բայց ինչ վոր մասնավորապես կհիշեմ, ցավագինորեն կհիշեմ, այդ իր կոշիկներն ելին...

Հորս և մորս վաստկած դրամն հազիվ ծայրը ծայրին կբավեր մեր ապրուստին, բայց այդ յազմայի գործի մեջ կային անգործության շաբաթներ, մասնավանդ ձմեռը, յերբ կամ ներկերը կսառեցին հողե ամաններուն մեջ և կամ սառնամանիքի պատճառվ անկարելի կըլլար յազմաները տանիլ լվալ ծովեղերք Այն ատեն քարիլ եր Յերք այդ չարաբաստիկ բառը կարտասանվեր տանը մեջ, գիտեցինք վոր մեր նեղ որն ալ ավելի պիտի նեղնար Այդ քարիլլը իմ մտքիս կներկայանար զզվելի և թափ սարդի մը պես, վոր անկլուն մը դարանակալ կսպասե և միշտ կսպասնա մեր կյանքը թունավորելու Ալլապես, յերբ գործ կար, կերպով մը կապրելինք Տունը, ուր կընակեցինք, ժառանգություն մնացեր եր մորենական պապես, վոր լեղած եր ձկնորս և քաջ նավավար Հայրս շաբաթական կստանար լերիք մեծիտիե և դեռ կհամարվեր լավ վճարված խալֆա, վորովհետեւ տասներկու տարի ի վեր կաշխատեր Գել Նիկոլոսի փավլիքան Հայրս շաբաթականը կառներ կերթար շուկա և կգներ յերկու վոչ խարի գլուխ Այդ եր մեր մսեղենը Յերբեմն փոփոխություն մտցնելուն ամար, փոխանակ գլուխը, կըերեր վոչխարի փորոտիք Այդ պարագային վախվելով կը մտներ սեմեն, վորովհետեւ մայրս կհարձակեր իր վրա, մեղադրելով, վոր գժվար գործ կըանա իրեն Դեպի հինգ-

շաբթի ոխտ մը ճերմակ խաշած լուրիա կամբողջացներ մեր շաբաթական ուտեստեղենը: Յերբեմն, սակայն, յերբ Վոսփորի ջուրերը առատությամբ կուտալիքն խանչին կամ բալամուտ, հայրս խուրձ մը բողկի հետ ձուկ կրերեր: Տունը կլցվեր տապակածի կամ խորովածի ուրախ բուրմունքով և նույնիսկ հորս գեմքը կպարզվեր, յերբ բազմոցին վրա յերկարած կապասեր, մինչ մայրս կասկարաչին կամ ունելիին հետ ծեծկվելով ճաշը կպատրաստեր: Այն ատեն հայրս իր ներքին զոհունակությունը արտահայտելու համար տասնոց մը կուտարմեղի, վոր յերթանք ախտերեն\*) շաբարեղեն գնենք մեղ համար:

Ճաշեն հետո, բացառապես, հայրս ու մայրս մանդալին շուրջ կղանդաղեցին և խահվե մը կխմելին, լուռ, բայց համերաշխ իրենց բարորության զգացումին մեջ:

Բայց ասոնք շատ հաղվաղեղ որեր ելին մեր կլանքին մեջ: Հորս վաստակը պետք եր բավեր մեր բոլոր ծախքերուն, վորովհետեւ մայրս անվերջ և անզադար պարտք կիմարեր: Նախ կար պարսիկը, վոր քառապատկված գիներով ապառիկ ապրանք կրերեր և վորով դեւ աղեկ կհագվելիինք: Այդ անիծյալ պարսիկը մեր թաղին մղձավանջն եր, ամեն շաբաթ որ կանցներ, կհանդիպեր գրեթե ամեն տուն և մասմաս կդանձեր տոնելիքները: Յեթե մեկն ու մեկը չի կրնար վճարել, պարսիկը կդարձանար, կդուռար, կհայհոչեր, կից կզարներ պարտափառոջ դուան, սպառնալիքներ կըներ...

— Աճեմը կենե ալսոր պոռաց... կտեղեկացներ մայրս նույնիսկ մեղի, յերբ տուն կդառնայինք:

Բացի պարսիկեն կային ուրիշ պարտքեր: Յերբ

\*) Ախտերեն — մանրավաճառ

թաթիւ ըլլար, հացագործին դրամը չեր վճարվեր շարթե շաբաթ, կդիղվեր, կդառնար խնդիր մը: Ասկե զատ ձմեռը ածուխ գնելու և ուրիշ պիտույքներու համար հարկ կըլլար վաշխով դրամ առնել գործատերեն: Մայս անդադար կրաներ և վաստկածին «վրան չի նալած» կուտար պարտքի: Յեվ դեռ մենք բախտավոր եյինք... Հայրս սովորություն չուներ գինետուն յերթալու, կային, վոր վորք ելին և ծանրացած իրենց մորը աշխատանքին վրա, կային, վոր անոթի կմնային, վորովհետեւ իրենց հայրը գինետունը կթողուր վաստակը, և կային վոր հիվանդ ունելին... Մենք բախտավոր եյինք, պաղմանով վոր բացառիկ և անհրաժեշտ ծախք մը չի ներկայանար, և կներկայանար յերբ հարկ կըլլար հայրիկս կողիկ առնել:

Խեղճ հայրս... հակառակ իր խոնարհ ծագումին և շարքաշ կյանքին, փափուկ վոտքեր ուներ, վորոնց մորթը կփշտեր, յերբ կոպիտ կոշիկներ հագներ: Այդ պատճառով կերթար Սթամպու, մեծ զուկան և այնա տեղ իրեն ծանոթ խանութե մը կգներ վոտքի չափին մեծ կոշիկներ: Անոնք սովորական կոշիկներ եյին, յերկու կողմերը լաստիկով, վորոնց մեջ վոտքերը կը մտներ ինչպես մույկի մեջ: Այդ մեծկակ կոշիկներու յերեսները մեկ քանի որեն ծալքեր կշինելին, ծալքը թեթև մը կբարձրանար, փոշին կամ ցեխը հետքեր կթողելին անոր խորշուներուն մեջ և անոնք կունենային ցավադին ու սրտառուչ արտահայտություն մը:

Այդ կոշիկներուն հիշողությունը վառ գուշնով կը պատկերացնե մտքիս հորս կյանքը: Անոնցմով կերթար ծովեղերք չաղմաները լվալու, անոնցմով կբարձրանա դառիվերը մեջքը կբած թած լաղմաներու բեռին

տակ, անոնցմով կերթար վոչխարի զույգ մը գլուխ-  
ներ զնելու իր հալալ վաստակով, վորպեսզի չոլուխ-  
չոճուխ ուտեն կշտանան: Անոնցմով կերթար Դել Նի-  
կողոսին զլուխ ծռելու, իբրև շնորհ խնդրելու մեկ  
կամ յերկու վոսկի, հարկուրին յերկու հարկուր տոկո-  
սով, յերբ թաթիլ ըլլար, կամ տաղավար մը վրա  
հասներ աղետի մը պես Յեվ անոնցմով ե, վոր գար-  
ձյալ կիրակին և տոն որերը ինձ հետ «կիրկըննար»  
գեպի քարձունքը, վոչ շատ հետու, վորովհետի մշտըն-  
ջինապես հոգնած մարդ եր... և սիրտ չեր ընենք քսան  
փարանոց խահվե մը խմել վոնե զբոսատեղիի մեջ:

Յեկինչ վոր իր աչքերը չելին արտահայտեր, ինչ  
վոր իր շրթները չելին արտասաներ, կարծես կգրվե-  
լին այդ կաշիկներուն վրա, իր հոգիի շարժումները,  
իր թագուն ըմբոստությունները և իր անսահման զո-  
րովանքը իրեններուն համար կդրոշմվելին այդ ցալս-  
գին, այդ տրաում կոշիկներուն վրա:


Վաղուց ե, վոր հայրս կհանդչի Սկյուտարի հինա-  
վուրց գերեզմանատան մեջ: Անոր չարքաշ վոսկորները  
փոշի դարձած են բազկատարած թմբիներու հովանիին  
տակ և յերբ այսոր կմտարերեմ դինքը, կսկիծ մը  
հերյունի պես կծակե սիրտս:

Ինչո՞ւ այն ատեն չի գիտցա իրեն ըսել այն  
խոսքերը, վոր ալսոր գիտեմ և վորոնք անշուշտ իր  
հուսահատ չքավորությունը պիտի փոխելին հուսառատ  
պալքարի: Ինչո՞ւ յերբեք չի գիտցավ, վոր իր կոշ-  
տացած ձեռքերը ուրիշ բյուրավոր ձեռքերու հետ կը  
կերտելին աղաղան և իր վոտքերը, վոր ալնքան  
վհատությամբ կղեղերեցին փոշոտ կամ ցեխոտ ճամ-  
բաներու վրա, արդեն խակ կառնելին քայլեր, վոր ի-

ըենց վորդիները պիտի վերածելին հաղթական քայլ  
երու:

\* \* \*

Մեր դպրոցի աշակերտներուն մեջ կային տաս-  
նլակ մը հարուստ տղաքներ, մոտ հիսուն ձրիներ և  
լերկու հարյուրե ավելի եսնաֆի տղաք: Մենք ստվար  
մեծամասնություն կկազմելինք, բայց մեր մեջ ալ  
տարբերություններ կային: Վոմանք կերթալին կը ըս-  
քսվելին հարուստի տղոց և նույնիսկ կծառայելին,  
մինչ անոնք կմնային անտարբեր և գոռող թե ուսու-  
ցիչներու և թե քծնող ընկերներու հանդեպ: Ձրինե-  
րուն խոսքը չեր ըպար: Եսնաֆի տղաքն ելին; Վոր  
կուտային ամեննեն հառաջադեմ և փայլուն աշակերտ-  
ները և մեր մեջ ելին նաև ամեննեն քաջերը, հանդուգն  
և նետվող տղաքը, «ստահակ»-ները, ինչպես կլոչեր  
տնօրենը: Դպրոցի ուսուցիչները և «վերին մարմինը»  
ուզելին թե չուզելին մեզ հաշվի կառնելին: Այդ զանդ-  
գածին մեջ խումբ մը տղաքներ, վորոնց մեջ ե-  
լինք մենք չորս յեղբայրներս, ամբակուռ կորիզ մը  
կկազմելինք և հեղինակություն ունելինք բոլոր աշա-  
կերտներուն վրա, ինչ վոր ձեռք անցուցեր ելինք մեր  
բուռնցքներու ուժով: Դեռ մինչև ալսոր վորոշ հրճվան-  
քով կհիշեմ կուրծք կուրծքի անհավասար կուբվներ,  
վորոնցմե հաղթական դուրս կելլելինք: Մենք ելինք  
վոր զբոսանքի ժամանակ ողարագլուխ կզառնայինք  
հանդուգն և յերեմն՝ արդիլված խաղերու, և մենք  
ելինք, վոր ստանձներ ելինք «արդարություն ընել»  
լերը հարկ ըպար: Հարուստի տղաքը կզգուշանային  
մեզ հետ գործ ունենալի, իսկ ձրիները վախվելով  
կհեռանալին մեզմե և յերեմն ալ հլու հազանդու-



թիամբ մեզ կմատնելին։ Այդ լաւկան, միշտ նկուն  
տղաքը ինձ զայրութիւն կպատճառելին։ Ալ սակայն ձրիի  
մը պատճառով քիչ մնաց, վոր վոնտվելի դարոցեն։

Որ մը, չեմ գիտեր ինչ պատճառով, ընդհանուր  
հսկելը քանակով զարկավ տղու մը մատներուն։ Անիկա  
տխեղծ պատանի մըն եր, վոր միշտ կդողդողար մա-  
շած հագուստներուն մեջ։ Յուրա եր և նոր ավարտեր  
ելինք գրուանքը, տղուն ճաթուտած ժորթով ձեռքերը  
ուռած ելին և կապտած։ Հանկարծակիլի յեկած քանա-  
կի հարվածներեն, ան շշմեցավ և սկսավ լուռ արտաս-  
վել, Յալված ձնոքերը դրեր եր ծոցը և կմղկտար, յեր-  
բեմն ձեռքերեն մեկը դուրս կհաներ, վրան կնայեր և  
ավելի առատ արցունք կթափեր։

Հանկարծ ինքզինքն դուրս յեկա։ Տեսակ մը տա-  
ռապագին զթության զգացում յերբեմն անսպասելի  
կերպով կդրավիր ինձ։ Յես գիտելի իմ այդ ներքին  
թուլությունը և կամչնայի ու կիրորձելի հաղթել անոր։  
Անիկա դառն զգացում մըն եր, վոր անգթորեն կտան-  
ջեր ինձ և փոխանակ ինձ մեզմացնելու, կդարձներ  
հերսոտ, հարձակողական։

Եերք նայվածք աղուն վրայեն դարձավ հսկիչին, վոր  
անտարքեր իր արարքին՝ կանցներ գրասեղաներու ա-  
ռաջքեն, աչքս դարձավ և ակնիթարթի մը մեջ, ինչ վոր  
գտա ձեռքիս տակ՝ նետեցի զլխուն։ Ամբողջ սրահը  
տակն ու վրա յեղագ, ուզեցի փախչի հսկիչի հալածան-  
քեն, բայց ահա տեսա, վոր հսկիչը կփախչեր ինձմեռ  
Վոտնամաններս հաներ, ձեռքս բռներ ելի և պատ-  
րաստ ելի ինքնապաշտպանության։ կելեցի գրասե-  
ղաններու վրա, կցատկելի հանկարծ, հսկիչին ճամբան  
կտրելով, ան առաջքես, յես յետևեն կվազելինք նստ

րաններու միջև լեզող նեղ անցքերին։ Մեր խումբի  
ընկերները, վորոնց շարքին և լեզրալըներս, հառաջա-  
ցած ելին սրահին կերպոնը և ձեռքերնին խոթած տա-  
րատներու գրաւանները, նայվածքով լուրջ կհետելին  
այս անսովոր տեսարանին։ Վերջապահես հսկիչը հաջո-  
ղեցավ սրահեն դուրս սպառդիլ և քիչ հետո յերեվակ  
անորենին սիլուեթը։

Ինձ տարին խորհրդարան, ուր հավաքված ելին ու-  
սուցիչները, և անորենը սկսավ խոսիլ։ Արլունս դլուխս  
խոնված եր, ականջներս կրղղային և բառ մը չեցի հաս-  
կընար։ Միան կարծես մշուշի մը մեջեն կտեսնելի  
հսկիչին մեռելի պես տժգույն դեմքը և Քյոսե Մինասը,  
քարտուղարը, վոր մեծ տետրակի մը մեջ բան մը  
կդրեր ինձ վերաբերյալ։ Ավելի ուշ իմացա, վոր վոչ  
մեկ կապ չեցին տեսեր քանակի հարվածներուն և իմ  
արարքիս մեջ, վորը վերադրեր եցին անսանձ ստա-  
հակության։

Բայց այդ գեղքը պատճառ էեղավ, վոր սերտ բա-  
րեկամությամբ կապվիա նորեկ աշակերտի մը, Պլու-  
թան Պետիկին հետ։

Անիկա տասներեք տարեկան մը կար և վերի դա-  
ստրաններեն եր։ Դասի դադարին ինձ մոտեցավ  
և ըսակ։

— Իրավունք ունելիր, մարմնական պատիժը ար-  
գիլված եւ։

— Աս չեր պատճառը, ըսի դիտմամբ և կաս-կարմիր  
դառնալով, խարեզ\*) ունեյի։

Պետիկ նախ զարմացական, հետո ժամանել նայ-  
վածք մը ուղղեց ինձ։

\*) Վոլու

— Թնդաղ ալիքակես ըլա, ըստավ, ու թես մտնելով ինձ  
հեռացուց աղաց խումբեն, վոր մեղ շրջապատեր եր:

— Անունդ ի՞նչ և— հարցուց մեղմությամբ:

— Անունս Կարպիս Սեղբակյան եւ:

— Յազմաճի Սեղբակյան տղան ես...

Իմ հաստատական պատասխանիս վրա պահ մը  
մտածեց և ավելցուց:

— Արտաշ հորեղբալրս Ճանչնալու յե հայրդ, կրնա  
ըւալ, վոր քեղ դպրոցեն վանտել ուզեն, դուն հոգդ  
մըներ, յես կիսուիմ Արտաշ հորեղբորս:

Պետիկի ընտանիքը հոչակավոր եր Սկյուտարի մեջ:  
Միծ հայրը՝ Պլութ, նշանավոր յեղած եր իր խիզախ  
քաջությամբ և շահատակություններով: Կըսեյին թե  
ան իր յերիտասարդ տարբիները անցուցած եր Սաբան-  
ջայի լեռները և չերքեղ եղիյաններու պետք յեղած եր չեր-  
քեղի անունով: Անիկա փոխն ի փոխ յեղած եր խաչախ-  
նի, ավաղակ և հարատե կոված եր գետերու և կառա-  
վարական ուժերու դեմ: Հմբոստ, քաջ կովող, միենույն  
ատեն կըսեյին թե յեղած երարի և հոգածու իր «իշխա-  
նության» սահմաններու մեջ յեղող գլուղացիներու հա-  
մար, առանց աղգի խորության: Հայրապետ ամուճաս,  
վոր Յենի Մահալի կրնակեր, յերբ մեղ ալցելության  
կուդար և ողի մը կամ յերկուք նետած կըլլար, կպատ-  
մեր Պլութի սխրագործությունները և կըսեր.

— Յերբ գեղ կիջնար, չոճուխի պես անվնաս մարդ  
եր, ամա, ոիսի ըսիս, ինչնու լիո կելլեր:

— Հայրկավ խելքի մը կծառակեր, կըսեր մայրս:

Բնիկ Սկյուտարցի, Պլութ որ մըն ալ վերադար-  
ձեր եր տուն, ամուսնացեր և մեկ յերկու տարի

ապրեր եր խաղաղ։ Հետո դարձեր եր ջրհանկիր, ջրհանկիրներու բելիզ, և վարջապես որ մը սպաննվեր եր. յերիտասարդ ջրհանկիր մը, վորուն համար կը-սիցին թե կաշառված եր, նենգութլամբ, կոնակին, դաշունով զարկեր եր Պլութը։ Այն ժամանակ Պլութի յեղերական մահը վողքալու համար, սկյուտարցի աշուղ-ները տեսրաներ շիներ ելին։ Հայրապետ ամուճաս գոց գիտեր այդ տեսրաները և կերպեր։ Յերբեմն ալ հանկարծ կանգ կառներ և կդռչեր.

— Հեյ կիտի Պլութ, հեյ.... դուն մեռնելու մարդ ելիր, պե՞...

Պետիկի հալը, Պլութ ողլու Խաչիկ, վողորմելի մարդ եր, բայրախ սրունքներով, աստվածավախ, գլուխ խոնարհող, շուրջեն վախցող, և վոր սակայն ձեռքե ձեռք կքաշեյին, վորովհետեւ կըսելին թե զուլու նեֆես\* ունի։ Կըսելին թե անոր անհծքը և աղոթքը կրանի։ Հի-վանդի տերերը կկանչելին զինքը. անիկա ձեռքե-րով և մատներով խորհրդավոր շարժումներ կըներ, ավետարան մը կկարգար, քանի մը անխմանալի կա-խարդական խոսքեր կըսեր հաճախակի ընդհատվելով և հու, հու, փշելով հիվանդին վրա։ Անգամ մը յեկած և իմ վրաս ալ աղոթելու և դեմքիս վրա նողկանքով զգացած եմ իր գարշահոտ «Նեֆես»-ը։

Խաչիկ որվան մեջ կաշխատեր փավլիքան. անիկա խեժ կկոխներ յաղմաներու վրա։ Բանվորները վորքան կսիրելին իր յեղբայրը, Արաշեսը, այնքան կատե-լին զինքը, Արդեն յերկու յեղբայր յերբեք հաշտ չելին յեղած իրարու հետ։ Ամեն անգամ, վոր Արտա-շես իր յեղբորը հանդիպեր, իբրև արհամարհանքի նշան

\* ) Ուժեղ շունչ։

թուրքի ժայթք մը կնետեր շեղակի: Առջիկ թավ հոնքերը կպստեր և իր ջրագույն աչքերը կանկեր յեղբորը վրա:

— Ծռ, կըսեր Արտաշես բարձրածայն, առ աչքերովդ գնա պառավ կնիկները վախցուր...

Արտաշ հարազատ վորդին եր Պլութին: Ինքն ալ ջրհանկիր, քանի՛ անդամներ մարդ ազատած եր հրդեհի բոցերուն մեջն: Անիկա հուժկու մարդ մըն եր, վոլոր պեխերով, մութ կարմիր ֆեսը ծուռ դրած գանդուր մազերուն վրա, մեջքը պինդ կապած կարմիր գոտին և կարճակոթ դաշույնը միշտ գոտիին մեջ: Արտաշ ալ յազմածի յեր, բայց կանոնավոր չեր աշխատիր, վորովդ հետև միշտ կոխվ կըներ գործատերերուն հետ: Կըսելին, վոր Յենի Մահալլեյի և Սիլինարի բանվորունիները խենթ կըլլան իր վրա, մեկ խոսքը յերկուք չեն ըներ: Իսկ յերբ հրդեհ ըլլար, առաջինը կվազեր և հրդեհը մարելեն յետքը, իր հաղթական նաղարայով \*) կթնդացներ թաղերը:

Պետիկ հիացումով կխոսեր ինձ իր հորեղբորը վրա: Անիկա մեր պատանեկան յերեակալությանը կներկացնար ինչպես առասպեկտական հերոս: Ինչ վոր կցանկալիինք, ինչ վոր կար մեր մեջը՝ ձգտում և իդ, մարմնացած եր Արտաշի մեջ: Ան իր գոյությունով կարծես մեր ամենուս վրեժը կլուծեր: Թաղական, հոգաբարձու կզողային իրմեն: Աղքատախնամի աղաները անտրտունջ կհանձնեցին իրեն ինչ վոր պահանջեր, վորպեսդի տանի բաժնե աբովիսի աղքատներու, վորոնք մուրացկանություն չեցին կընար ընել: Յեվ ան արդ բոլորը խղճառությունով կկատարեր: Յերբեմն ալ

\*) Աղաղակ:

կչարանար, գուռ, ապակի կկոտրեր և քանի մը որ կիբուար  
տխը ության մեջ: Թաղին թյուրք վոստիկանները այդ  
բոլորը չի տեսնելու կուտալին, վորովհետև կզգուշա-  
նալին գործ ունենալ իրեն հետ, և այդ հանգամանքը  
թաղեցիներու աչքին բացառիկ հմայք մը կուտար Սր-  
տաշին:

\* \*

Այն տարվան ձմեռը անսովոր կերպով խիստ յեղափ:  
Դեկտեմբերի սկիզբեն ձունը սկսավ տեղակ առատու-  
թյամբ: Աղքատիկ թաղերու մեջ անակներու տանիք-  
ները կքեցան ձյունի ծանրության տակ: Գործերը դադրե-  
ցան և բանող ուտողներու համար հացը ու ածուխը  
պակսեցան: Դիշերները հյուսիսային քամին կիշեր մը ըի-  
կի պիս և մեր տունը կտատաներ ճարճատելով ինչպես  
ալեկոծութենք բռնված նավ: Առավոտ և յերեկո ըի-  
փին\*) կտեղար սեղմ և արագ ու ձյունեղեն մշուշ մը  
կկազմեր, վորուն մեջն անցորդները և մեկ սեմեն  
մյուսը փոխադրվող շուները պիտակված կերեելին:  
Վոսփորի վրա յերթեեկող շոգենավերու սույրը՝ յեր-  
բեմն թափ, յերբեմն սուր, կարծես անվերջ աղետ մը  
կազդարաբեր: Շուկացիները տուն մնացին, դպրոցը  
գրեթե թափուր մեաց և վերջապես փակլիցավ:

Ամեն որ, սակացն, կես որի մոտերը, թիփին  
կդադրեր, արել կծագեր և համատարած սպիտակու-  
թյունը կշողշողար անհամար նշույլներով: Յերբ տունն  
դուրս կելելինք, կշանալինք և աչքերնիս քթթելով  
կխարխափելինք, մինչեւ վոր վարժվելինք ալդ ան-  
սովոր և ցուրտ պայծառության:

\* ) Մանը ձյուն

Մենք միացած մեր թաղին տղաքներուն, կողնե-  
ինք մեր դրացիներուն, վոր տան առաջք դիզված  
ձյունը պարպին բահերով, տանիքներու վրա բեռցած  
ձյունը թեթևցնեն, բայց ավելի հաճախ անձնատուր  
կը լլալինք ձյունագնդակի խաղերու և մեր աղաղակ-  
ներով կթնդացնելինք ամայացած փողոցները: Ցեր-  
բեմն ալ ձյունե մարդ և արջ կշինելինք: Մեր ընկեր-  
ներեն մեկը, Սարդիսը, մասնավոր հատկություն ուներ  
ձյունը կաղապարելու: Թաղե թաղ «փողոցի տղաքը»  
իր թանկադին աջակցությունը կխնդրելին:

Անիկա գալրպ քազան\*) Միհրանին տղան եր: Հայրը  
լիդած եր ճարտար դժագրիչ և արհեստավոր: Մեծերը  
կըսելին, վոր ձեռքը անանկ պիլեզիմ\*\*): մը ուներ, վոր  
տունի տեղի տեր կընար ըլլալ: Բայց ան հովարտա  
մարդ եր, վաստակածը կուտեր դուռ դրացիով: Կը  
պատմելին, վոր լերեմն նույնիսկ լի որերը, կես վոչ-  
խար կրերեր տուն, կնոջը խորոված պատրաստել  
կուտար, կերթար շիշերով գինի կրերեր և փողոցին  
անցնող-դարձողը կհրավիրեր, վոր սեղանակից ըլլան  
ու շեն ու շենիք ըլլա: Ինք ալ քանոնը\*\*\*): կառներ  
ծունկերուն վրա և կնվագեր:

Բայց դալըպ քազան Միհրան ավելի հաճախ գի-  
նեսուն կերթար, կսմեր անվերջ, մինչև վոր դդայա-  
զիրկ վիճակի մեջ տուն բերելին զինքը:

Ռամազանի մեջ, որ մը, կես որե լետք, գինով  
վիճակի մեջ գացեր եր Գըզըքը և այնտեղ աղբյուրին

\*) Յազմայի դժագըսթյանց կաղապարները հորինող և կազմող  
արհեստավոր-դժագրիչ, փորագրող:

\*\*) Բառացի՝ արտարանցան, փոխաբերաբար՝ արհեստ:

\*\*\*) Լարային նվազարան մը

գլուխը հարֆ\*) նետեր եր թրքուհիի մը: Կնոջը արձակած ճիշերուն վրա մոտակա սրճարանի մը իսլամները թափեր ելին վրան և լավ մը ծեծ քաշելե յետք հանձներ ելին վոստիկանստուն՝ ըսելով, վոր ռկչավուրը համարձակեցավ աչք բարձրացնել իսլամուհիի վրա, ուսմազանի սուրբ որով»:

Դատ դատաստանե հետո գալըպ քաղան Միհրան դատապարտվեր եր բերդարգելության և առանց կինը ու զավակը տեսնելու, անդարձ անհետացեր եր:

Սարգիս մեծցեր եր վորբ: Մալըը տարիներե ի վեր, սուդի սև պլոյաման կապած գլխին, լազմա կըաներ և զավակը կմեծցներ դժվարությամբ: Անիկա վտիտ, կապուտ և լեռաղուն աչքերով տղա մըն եր, գլուխը քիչ մը հակ մեկ կողմին, վորովհետև խույլուտ եր և վիզին մեկ կողմը կար եր սպիներով: Հաճախ կրացակաչեր դպրոցեն, վորովհետև գրեթե միշտ հիվանդ եր, բայց յերբ հարկ ըլլար ձյունը կաղապարել, անիկա հանկարծ մեջտեղ կելլեր: Ընդհանրապես հեզ և մեղմ, անիկա աչդ ուրաքալին կդառնար տիրական և մենք կամովին կհնազանդելինք անոր: Անիկա կդեգերեր տեղին վրա և աչքերը կծկելով կդիտեր շուրջը, մինչև վոր բարձրություն մը ընտրեր: Իր պատվերին համեմատ կդիզելինք ձյունը, մինչև վոր հսկալական զանգված մը կազմվեր: Սարգիս, ձեռքերը տարատին դըրպանները դըած կղեկավարեր մեր «աշխատանքը»: Եերբ ձյունը բավականին դիզված կըլլար, տարորինակ բան մը տեղի կունենար: Սարգիս նախ դանդաղ կը մոտենար դեզին և հետո կխոյանար վրան:

\*) Խոսք նետեր:

Տեսակ մը դիվային պար շարժման մեջ կզներ անոր ամբողջ մարմինը և այդ շարժումներին ինքնահատուկ ոիթմովը, միշտ դեպին շուրջը դառնալով, ծունկերու, ներբաններու, արմուկներու, ձեռքերու և մատներու հարվածներով և ճաղուկ հպումներով կկաղապարեր ձյունը, մինչև վոր հսկա արջ մը ցցվեր մեր առաջ իր սպառնական դունչով և կողերու վողորկության վրա լեղունգներով ուրվագծված ստեներով:

Մենք բերանբաց կմնալինք այս արդյունքի առաջքը Սարգիս իր գործը կատարելի լետք սրսփալով կհեռանար, վորովնետե հակառակ ձյունին և ցուրտին՝ քըրատինքը կվազեր քունքերեն: Դեռ կհիշեմ իր տիեզե սիլուեթը, ուսերը վեր տնկած, դունատ մազերը փակած ծոծրակին: Մենք ալ կշինեյինք ձյունե մարդ աղմես, շուն և ուրիշ կենդանիներ, բայց Սարգիսի շինածը ուրիշ բան եր: Ան չեր ուզեր ածուխի կտորներով աչք շինել վոչ ալ վողորկված աղյուսով՝ լինահեր: Բայց իր արջերը կնայելին և կարծես պիտի նետվելին: Մթնշաղին՝ շուները սարսափած կկաղկանաձեյին՝ մեղ խելահեղ ուրախություն պատճառելով: Մեր գոռում զոչումը կթնդար թաղերուն մեջ, էերեհան անցուրդ մը կժամաներ և կքաջալերեր, բայց ավելի հաճախ մեր հասցեյին կլսելինք հայոցություն և անեծք:

Դպրոցին մեջ վոչ վոք անդրադարձած եր Սարգիսի թագուն հատկություններուն: Կային մեկ քանի գըծագրության ընդունակ աշակերտներ, վորոնք ուսուցիչներ հսկողության տակ սիրուն պատկերներ կշինեյին և վորոնք կհարմարեյին ամենուն ճաշակին: Սարգիսի հողին մեջ ուրիշ և մեծզի յերազ մը կար: Անիկա

մեռավ անշուք, ոհու արբունքի չհասած, իր թշվառ  
տնակին մեջ:

\* \*

Այդ որերուն զժկամակությամբ տուն կղառնալին  
թաթիլ երև և թշվառությունը ավելի խիստ չոքեր եր  
ինչպես մեր թաղի տուներուն, այնպես և մեր տան  
մեջ: Հայտնործը մերժեր եր ապառիկ հաց տալ և  
հայրս կերթար փուռնն կառներ որական հացը, վոր  
դարձեր եր մեր միակ սնունդը:

— Ա՞յ մարդ, կ'ըսներ մայրս, անգործ ձեռքերը  
գալարելով, խարբիս\*) չի կա, չորս ովտ հացը հերիք  
չեւ:

— Ժում ըրեւ խորհուրդ կուտար հայրս:

Բայց հացի անբավարկանութենեն ավելի մեծզր կանք  
եր ածուխի սակավությունը:

Ունկորները, և նույնիսկ բարեկեցիկ եմնաֆները  
գարնան, աժան գինով կգնեցին իրենց տարեկան ա-  
ծուխը և կումբարեցին ձմեռվան համար: Բայց մեզի  
պես որը որին ապրող բանվորի ընտանիքները ստիպ-  
ված եին իրենց շաբաթական, նույնիսկ որական  
ածուխը գնել քոմուրճի Ավագեն, վոր անխնա գիները  
կրարձրացներ: Քանի ձմեռը կհառաջանար, քոմուրճի  
Ավագը կդառնար ահազգեցիկ մարդ մը, վորուն ձեռքն  
եր մեզ տալ քիչ մը ջերմություն կամ մերժել: Քանի  
ցուրտը կսաստկանար, այնքան կրակարանին մոխիրին  
մեջ նշուլող մճիրը կսակամլար: Մայրս խնամքով  
մեկ կողմ կդներ մեծ կտորները, ելլեմները, վորպես-  
զի գիշերը մոխիրին մեջ թաղե և առավոտուն կրակ

\*) Հացի հետ կերած վորեւե ուտելիք:

ունենաւ։ Բայց հաճախ այդ մեծ կտորները կծխային և սենյակը կլեցնելին թունավոր արտաշնչումներով։

Աստուծմե գտնա, կանիծեր մալրս, նորեն մարսիս\*) քշեր եւ։

— Յա ի՞նչ գիտցար, կըսեր հալրս, մեզի պնո անձարներուն բռնալ\*\*) քյոմուր պիտի տմր...»

Մալրս ամեն անգամ կըմբոստանար, յերբ հալրս անձարության խոսք կըներ։ Յեվ ամեն անգամուն ինձ կթվեր, վոր մայրս անժանոթ և խորհրդավոր ուժի մը կկրթներ, յերբ կպատասխաներ։

— Քա ի՞նչու անձար պիտի ըլլանք... Գիշեր ցերեկ աշխատող մարդը անձար չեւ Թոնդ քու քյոմուրճի Ավագդ մեր տեղը անցնի, պոյը կտեսնենք... անտեն կհասկնանք ով ե անձարը...»

— Մարդուն գործն ե, Նունիկ, կըսեր հալրս հաշտաբար, կնիկը ամեն տարի նոր քյուրք կուզե...»

— Թերմաշ մնա վրային...»

Որերը կանցնելին տաժանքով։ Պղտիկ քուզրս հիվանդացավ կարմրուկով և մլուսն ալ վարակվեցավ. պետք եր սենյակը տաք պահել։ Քյամուրճի Ավագին բարի կամ վատ կամեցողությունը դարձավ մահու և կենաց խնդիր։

Դժվար ե ինձ համար մանրամասնել այդ որերու դաժան կյանքը. փոքրիկ քույրս մեռավ. յեղան որեր, վոր մեր կըակարանի մոխիրը պաղեցավ, անհաց և անլուս պառկեցանք մեր ցուրտ անկողիններուն մեջ։ Մյուս քույրս դեռ հիվանդ եր և գիշերն ի բուն կը

\*) Ծխացող ածուխ

\*\*) Լավ տեսակի ածուխ

հազար։ Անկըսակ սենյակին մեջ ողը ցուրտ և բորբոս կհոտեր։ Մորս խիստ դեմքն ավելի դաժանացած երանիկա իր արցունքը կուլ կուտար և մեղ կնայեր խելագարի պես։ Կարծես մեղ դեմ լեցված եր ցատումով, վորովհետեւ մեղմե ամեն մեկը իրեն կհիշեցներ իր կորսնցուցած լերեխան։

\* \*

Յերբ դպրոցը վերաբացվեցավ, առաջին ուն խել ուրախությամբ դտա Պետիկը։ Անիկա դուրսի գրան սեմին վրա ընկերոջ մը կսպասիր. յերբ ինձ տեսավ, մոտեցավ և սկսավ խոսիլ։ Անոր գռուզ և խիտ, սև մաղերը գտակին ներքնեն դուրս կհորդելին, ածուխի պես սև աչքերը կանգ կառնելին խոսակիցին վրա և կարծես համոզիչ կդարձնելին իր խոսքերը։ Յես թե հպարտ եյի և թե խորապես ուրախ, վոր Պիտիկի արժեքով «մեծերեն» մեկը այդքան ուշադիր եր ինձ նկատմամբ։ Յես առաջուց իր ամեն մեկ խոսքին համաձայն ելի, բայց անիկա կուզեր, վոր հասկնալով համաձայն ըլլամ։ Պետիկ սովորություն ուներ ամեն ինչ դատելու իրավունքի տեսակետեն և ինձ ալ կմղեր տրամաբանելու։

— Իրավունք եր, վոր բարեկեցիկ տուներու մեջ լեցուն փայտածուխ ըլլար և ահալին<sup>\*</sup>) կոտորվեր առանց ածուխիւն։

Խնդիրն այն եր, վոր սուզ, աժան, քյոմուրճի Ավագին քով ածուխ չեր մնացած։ Մյուս ածխավաճառներն ալ չունելին, «Վասկիի դինով քշեցին իրենց մթերանոցներու փողին և քարով խառն մնիրը», ասիս-

\* ) Հասարակություն։

կան գյուղերեն ածուխ չեր կրնար գալ, վորովհետեւ  
ճամբաները գոյված եյին ձյունով։ Բայց լուր եր  
տարածվեր, վոր նավամատուցը Ռումելիի փալտածուխ  
պիտի հասներ առաջաստանավերով։

— Կարսին, վերջացուց Պետիկը իր խոսքը, հորդ  
ըսե, ականջը չորս բանա։

Յես զիտեյի, վոր հալբս զիտնար թե վոչ, միևնույն  
եր, տունը տամնոց մը չի կար։ Բայց իս այդ չեցի  
ուղեր խոստովանիլ Դեռ այն ատեն կկարծեյի, վոր  
Նքավորությունը ամոթ մըն ե, ընտանեկան գաղտնիք  
մը և պիտի ուղեցի մեր տան վիճակը ծածուկ պահել  
նույնիսկ Պետիկեն։ Բայց ան կարծես ինձ հասկցավ  
և մտերմորեն ժապաելով, հարեց։

— Հոգդ մըներ, ամեն բան տեղը կերթա, Արտաշ  
հորեղբայրս..

Ու ինձ խոսեցավ յերկարորեն Արտաշի ըերած ա-  
ջակցության մասին տնանկներու։ Քանի կխոսեր, կար-  
ծես ծանր ըեռ մը կելլեր հոգիխ վրայն, կարծես փակ  
դռներ կճռնչեցին իրենց ծխնիներուն վրա։ Պետիկ  
կկրկներ ինձ այն խորհրդածությունները, վոր լսեր  
եր հորեղբար բերնենու Յեվ այդ բոլորը այնքան ներ-  
դաշնակ եր, այնքան տըամաբանական։

— Ինձմե մի գիտնար.., հորեղբայրս խոսեր և Գել  
Նիկողոսին բանվորներու վիճակին վրա. ան ալ ըսեր  
ե, վոր աղքատախնամ կա, յեկեղեցի կա, թաղ թա-  
ղական կա; կարոտները թռղ զիմեն։

Հիշեցի մորս արդար հաղարտությունը և յես ինքս  
իմ արժանապատվությանս մեջ վիրավորված աքլորի  
պես կարմրեցա և գոշեցի հոնքերս պոստելով։

— Այդ բաները մեզի համար չեն..,

Պետիկ հանկարծ իրնդաց և գլուխը զվարթորեն թոթվելով, ըսավ.

— Հորեղբայրս խոսքի տակ մնացող մարդ չեւ, ան տվեր և Գել Նիկողոսին պատասխանը՝ ըսեր եւ աշխատող մարդը մուրացկան չեւ, դուն անոնց սալիկն\*) տունդ տեղդ լիցուցեր ես, անոնք կը անին՝ դուն կուտես. յես քու խերդ կանիծեմ, լեշդ կփռեմ յեթե քու բանվորներուդ մեկ յերկու վոսկի փոխ չի տաս աս նեղ որերուն:

Ցեսալ խնդացի, բակին մեջ զանդակը դարկավ. մեր դասարանները ուղղվեցանք գրեթե վաղելով. Պետիկ նրբանցքին մեջ պոռաց.

— Առանց Փալիդի...\*\*) )

Ամբողջ որը չի կրցա ուշադրությունս սկսուել դասերուս վրա: Միտքս շարունակ կդեղերեր Արտաշե խորհրդածություններու շուրջ: Խելքս շատ բանի չեր հասներ, բայց անոնք իմ հուղված հոգիիս մեջ ալիքի պես բարձրացող մտահոգություններուն պատասխան մը կուտային:

Կսիրեկի Արտաշը իմ թարմ հոգիիս ամբողջ ավագունով: Ինձ կթվեր, վոր ան արդեն բաներ եր մեր վրա չոքած հրեշին կոտոշներեն: Բուռնցքներս կսեղմեկի տարատիս գրապաններուն մեջ և կերաղելի, վոր լես ալ որ մը Արտաշը ըլլամ և իմ սեփական ուժովս արդարություն հաստատեմ աշխարհիս վրա: Արտօ կուրծքիս մեջ կթփրտար ուժգնորեն, ամբողջ մարմնես հուղմունքը կանցներ սարսուոի ոլես. կխորհեյի

\*) Շնորհիվ:

\*\*) Վաշխ, տոկոս:

այն որերուն, յերբ ճակատաքաց և համարձակ պիտի  
նետվելի պայքարի մեջ և մահու վտանգն իսկ կդիմա-  
վորելի ժամանութ:

Յերբ դպրոցեն արձակվեցանք, ուզեցի Պետիկը  
գտնալ և կրկին խոսիլ իրեն հետ. բայց ան տարեկից  
ուրիշ աղաքներու հետ կխօսեր յեռանդով. իր տաք և  
համողիչ ձանը հասավ ականջիս.

— Իրավմէնք եւ վոր:

Հեռվեն ինձ ժամանութ, ձեռքով բարեկամական նշան  
մը ըրավ և յերեսը անդին դարձուց. Այն ատեն դժկա-  
մակությամբ և գլխիկոր տանս համբան բռնեցիւ:

Մեծ յեղավ զարմացումս, յերբ տունը համնելով  
գտա Արտաշեսը և մայրս դեմ առ դեմ նստած հրահը-  
ված կրակով լիցուն կրակարանին առաջ: Մորս դեմքը  
արտակարդ արտահայտություն մը ստացեր եր. անիկա  
արտորալով խահվե կեփեր կրակարանին մեկ անկյունը:

Յերբ ներս մտա, մայրս ինձ համար անձանոթ  
հպարտությամբ մը ըստավ Արտաշեսին.

— Կարպիսս դասերուն մեջ աղեկ ե, ուսմունքի  
սեր ունի:

Արտաշես ինձ նախցավ ժամանութ հետո խոր հա-  
ռաչեց և ըստավ.

Նայե, տղաս, վոր մեղի պես չըլլաս. ուսմունքը  
հիմակ թոփ ու թյուֆենիկ ե. ձեռք բեր, ամենուն  
հախեն կուզաս:

Յես ձեռքը համբուրեցի և տեղավորվեցա մորս թեղ-  
կահին առաջ: Բացի գիրքերս և տետրակներս, և այն-  
պես ձեւացուցի, վոր գաս կսորվիս: Իմ ամբողջ նպա-  
տակս այն եր, վոր մնամ այդ տեղ, Արտաշի հրաշակի  
ներկայության:

Մայրս և Արտաշ իրենց ընդհատված խոսակցությունը շարունակեցին:

— Հաշիվը դյուրին ե, կըսեր Արտաշ մորս, համոզիչ շետով, Ռւնեվորները մարտին, ապրիլին իրենց տարեկան փայտածուխը կառնեն աժան գինով, կլեցնեն մաղաղաները, հանդիսատ կապրին: Թող ձյուն ձմեռ ըլլա... անոնց համար քնչի մըն ե, մեզի համար՝ փորձանք... .

Մայրս լրին մտիկ կըներ:

— Պատասաը հոն ե, հաշիվը հոս ե, քանի՞ կուգա իրենց. ապրիլին ելլեմեն տասը, շատ շատ տասէրկու փարա լե, հեմ ալ բ'նչ ելլեմե... ջվալին ածուխն աւ ութը փարա... համա մեզի քանի՞ կնստի:

— Անոնք ուրիշ, մենք ուրիշ, ըսավ մայրս քենոսա ձայնով, հարուստին խարազ\* ) անգամ հավկիթ կածե...

Արտաշ պահ մը մտածէոտ մնաց, և հետո ըսավ.

— Քուրս, ատ իրավ ես, նոր չե... ըսել անցնին ալ բան մը չե... մենք ամեն մեկս որը որին կրանինք, կուտենք, լարյում\*\*) փարա չունինք, վոր ատենին, շնորհքով մեր ածուխը առնինք. ամա վոր միանմանք, . . նայե մեզ պեսները քանի՞ յեն, քուրս, հարյուրներ, հաղարներ, մենք ամեն զենկինեն զենկին\*\*\*)

կըլլանք:

Մորս աչքերը կփալլատակեցին. այտոսկըները կրակին դիմաց կարմրեր ելին, ջղային շարժումներով բաժակները տեղավորեց ափսեին մեջ և սուրճը լեցուց:

\* ) Աքւոր:

\*\*) Դիզգած:

\*\*\*) Հարուստ:

Արտաշ մեքենական շարժումով մեկ բաժակը առավ և մեկ կողմեն ուժպ ուժպ խնձելով, խոսքը շարունակակեց.

— Ունեցողը ոխան ութը, տասը փարալի ածուխը կառնե, հեմ ալ աղեկ տեսակին: Մենք ձմեռը քարին մոլոզին կուտանք մինչև քսան փարա, քսանհինդ փարա, աս տարի մինչև քառասուն փարա տվինք ոխային:

Մայրս անձկալի նայվածքով կհետևիր Արտաշի խոսքերուն և վերջի բառերուն վերճիշելով դաժան պահեր, ցալի և վիշտի հառաջանք մը արձակեց.

— Ե՞ս, մի... .

— Մինակ ածուխը չե... շարունակեց Արտաշես, այսոր բանվոր չկա, վոր Փայիզով փարա չտոնեն: ամբողջ տարին կտատիս, խեր մը տեսած ունին...

— Ի՞նչ խեր պիտի տեսնեմ, աղքանս, գոչեց մալրս, գլուխը ցցելով, մենք այս աշխարհիս անիծվածներն ենք...

Մայրս ակուաները սեղմած, ըուռն ցասումով կը հևար:

Տեսա վոր Արտաշես հուզվեցավ, անիկա զլուխը խոնարհեց և կարծես միտք մը զինքը կտանջեր, ետո ծխախոտի տուփը հանեց և ոկսավ սիկարեթ մը վոլորել:

Ծանր լոռություն մը տիրեց սենյակին մեջ, յես մտահոգ ելի այն մտքով, վոր թերեւ Արտաշես սրդողեցավ. բայց անմիջապես նշմարեցի, վոր անիկա կարեկից նայվածքով կդիտեր մորս տանջված դեմքը. ավելի մեղմ, ինչպիս յեթե չերեխալի մը խոսեր, ան վերսկսավ.

— Թուրս, Պաղտամը հոն ե, հաշիվը հոս ե. ամեն  
մեկս մինակ բան չենք կընար ընել. մեզմե ամեննեն  
խաղատային \*), վոր մինակը մնա, վոտքի տակ կերթա...  
աս աշխարհս ասանկ ե. յս խերն եմ անիծեր աս աշ-  
խարհիս, յեթե մենք միանալով ամենուն հախեն չե-  
գանք, Վաղը-մեկալ որը գործերը կրացվին, մարդդ աւ  
կաշխառի, դուն ար Ամեն ջաբաթ քանի մը ղրուշ  
մեկ կողմ դրեք, ըսեք, չի կա, կերանք... Թու ղրուշ-  
ներդ, իմ ղրուշները, ամենուն ղրուշները կմիացնենք,  
ապրիլին մեկ ածուխները կառնենք... կդնենք մաղա-  
ղաները, դոները կկղպենք, վեսելամ... ասիկա չըլլա-  
լիք բան մը չե, կամք ընենք՝ կկատարենք...

Մայրս իր չորս մատներուն վրա լոելայն հաշիվ-  
ներ կըներ. վերջապես վլուխը բարձրացուց և ըսալ.

— Յես խոսք կուտամ...

— Նայե, դեռ մտածեն, մարդուդ խստե, տանըմի՛ \*յեղիր, ինծի անանկ պատասխան մը տուր:

— Խորքս խոսք ե, ըսալ մալրս հոնքերը պոստելով.  
մարդս կհամողվի:

— Աս տարի մեծ բան մը չենք կընար ընել, ավել-  
ցուց Արտաշես, Փեշ ատեն ունինք. յեկող տարի դուն-  
իմ աչքս նայե... աս ի՞նչ հալ ե պէ... գոչեց հանկարծ  
զայրութով. Գել նիկողոսին պես ներիծ մը, վրան  
փշեա՝ վար կիյնա, ասլան դարձեր, թաթը դրեր ե մեր  
տմենուս վրա. չոր հացի մը գինով մեզ յեսիր դար-  
ձուցեր ե... Բայց դուն կեցիր, կտեսնես... ըսավ Ար-  
տաշ գլուխը կրակարանին վրայեն դեպի մայրս յեր-  
կարելով, դուն կտեսնես, մենք տմենքս մեկ ըլլանք:

\*.) Թաջ-լողի:

\*) Խորհրդակցիլ

անոր ալ հախեն կուգանք, քյոմուրճի Ավագին հախեն ալ կուգանք...

— Կրողը տեսնա յերեսնին, արձագանք տվակ մայրս, զլուխնուս աժտահա դարձեր են:

— Յեկող տարի պարտքե ալ կազատինք. խազա պելա սանտրդի մը հաստատենք. թաթիլ ըլլողը փոխ կառնե սնտուկեն, յերբոր աշխատիք՝ կվճարեք, Փայիղն ալ ձեզի պաշխ...

— Վուզ, երնեկ ըլլը ար... ամա տտանկ բան կընա ըլլալ. արդ ալլյուլյա\*\*) յե, աղբա՛րս, մալյուլյա...

— Դուն ինծի կճանչնաս, ըսակ Արտաշես լրջորեն, յես քեզի խոսք կընեմ կոր: Թնաւրս, ըսակ յեռանդով, աս ասանկ չի կընար քալել. արդարութուն կտ թե չե...

— Անոնք նորեն ճարը կդժնեն, մեղ ամենքս պուտ մը ջուրի մեջ կխեղպին, դոչեց մայրս սրտմտութունով:

— Անոնք, ով անոնք... թո՛ղ անոնք վախնան մեղմե... յես անոնց ամենեն զոռալային մարը...

Մայրս խնդաց հայնոյությունը լսելով և կարծես սիրտը զովացավ. այլս Արտաշեսի շրթունքեն կախված, անշշուկ մտիկ կըներ. Արտաշես յերկարորեն բացատրեց, վոր պետք եր շահիլ բանվորները և բանվորուհիները. «Ինչքան շատվոր ըլլանք, այնքան շուտ մեր կամքը կկատարենք». վերջապես մայրս իր վրա առավ համողել Պյուլպիուլ Տերեսիի բանվորուհիները:

— Նունիկ հանըմ, ըսակ Արտաշես զոհունակ, յես գիտեյի վորի կխոսելի կոր, և վոտքի յելավ:

Յերբ Արտաշես մեկնեցակ, կարծես հիմնական բան

\*\*) Խարկանք, յերագ:

մը փոխված եր տանը մեջ։ Մայրս այնքան վոգեոր-  
ված եր, վոր ինձ խելք դրավ և սկսավ խոսիլ Արտա-  
շին ծրագիրներուն վրա։ Ավելի ուշ հասկցած եմ, վոր  
մայրս վոչ թերահավատ եր և վոչ ալ հոռետես։ ընդ-  
հակառակը, ան պատրաստ եր թեավորվելու, գործի և  
պայքարի մեջ նետվելու։ Մայրս մեծ լեռանդով հայտ-  
նեց, վոր Արտաշես նավամատուցեն պարկ մը ածուխ  
դրկեր եր և թե հաշիվը պիտի տեսնելինք, ւերը բան-  
վորները համաձայնելին և գումար մը գոյանար։

— Ո՞ղուք ըսավ վերջապես մայրս, կարծես իր  
զեղուն զգացումները հայտնելու համար, յելլը, ինծի  
ջուր մը բեր։

Յեկ նայվածքը հուզումով լի կհետեւ շարժումնե-  
րուս։

\* \* \*

Մութը արդեն կոխեր եր, յերը հայրս լեկավ ձեռ-  
քերը բեռնավոր ծրարներով։

— Նունիկ, ըսավ դունեն ներս մանելով, Գել Նի-  
կողոսին մեռնիլը մոտեցեր ե…

Սենյակին մեջ յեղբայրներս և քույրս շարվեր ելին  
կրակարանին շուրջ և ունելիին վրա հացի շերտեր կը  
խորովելին։

Մայրս թեղկահին վրա սփոռոցը փոեց և հորս բերած  
ծրարները բացավ մեկիկ մեկիկ, հետզհետե մեր զար-  
մացած աչքերուն կհայտնվեցին ճերմակ պանիր, ձի-  
թապտուղ, չոր թուզ և ընկույզ։

Ալդ միջոցին հայրս նստած բազմոցին լեզերքը—,  
ձեռնարկած եր արդեն կոշիկները հանելու և միկնուկն  
տաեն կպատմեր, թե ինչպես գինետուններու փողոցը

Գել Նիկողոսը քովը յեկել եր և յերկու վոսկի սահեցուցեր եր ձեռքը, ըսելով, թե այս գեշ որերու շատ մտածեր եր բանվորներուն վրա և առանց Փայիզի վոխ կուտար.

— Գեշ մարդ չե, Նունիկ, կըսեր հայրս, զգացված գործատիրոջ վարմունքեն:

— Անկե աղեկը կըլլա, ըստվ մալրս խստությամբ:

Այս անակնկալ պատասխանին վրա հայրս լոեց և ամբողջովին անձնատուր յեղավ իր ամենորյա գժվար գործին: Յերկու ձեռքերով բռներ եր կոշիկը և կքաշեր կերպնացած և զգուշ ճիգով մը: Վերջապես խոր հառաջանք մը արձակեց: Տնեցիները սովոր ելին այս արարողության և անտարերերությամբ կհետևելինք անոր փուլերուն, բայց մալրս յերբ ուզեր հաճո ըլլաւ իր սթոին գորովը հայտնել, առաջուց ջուր կտաքներ և յերբ հայրս կոշիկները հաներ, կրերեր տաք ջուրով լականը, կդներ վատքերուն առաջք և մեղմ ձայնով կ'ըսեր.

— Վատքերդ ջուր դիր, կտինչանաս...

Այլպիսի որ մըն եր այդ իրիկուն, յերբ հայրս իր ցաված վոտքերը դրավ տաք ջուրին մեջ, ունմքը պլարդ վեցավ և աչքերը քաղցրությամբ կնայելին մորս, մեղ, տանը, պատերուն և իրիրուն:

— Աս կըսակը մւրկե ճարեցիր, Նունիկ, հարցուց վերջապես հայրս:

Այն ատեն մայրս պատմեց Արտաշեսի ալյելությունը, անոր խոսքերը և ըերած առաջարկությունը:

Յես լարված ուշադրությամբ կհետևելի հորս դեմքին, վորոնն վրա հոնքելը յերբեմն կպստելին, յերբեմն կըսարձրանալին սեղմելով կամ պարզելով ճակա-

տին կնճիռները։ Յեվ ովկ գիտե ի՞նչ մտածումներ  
կանցնեյին անոր տանջված և փորձված մարդու գըլ-  
իսն։

\* \* \*

Այն որեն մալրս աչլափոխվեցավ։ Անիկա նախ մեծ  
յեռանդով առւնը տեղը մաքրեց, լվացք ըրավ, մեզ  
տմենքս լվաց մեծ լականին մեջ, ինքն ալ բաղնիք  
դնաց և հետո սկսավ պործի։

Ամեն առավոտ սև շալը գլուխը առած կերթաը գրա-  
ցիներուն դուռը կզարներ։ Թաղին մեջ ամենքը իրար  
կճանչնալին, բայց զործի ատեն ժամանակ չունեյին, իսկ  
թաթիլ որերուն սիրտ չունեյին իրարու ալցելության  
չերթալու, զրուց ընելու։ Մորս ալցելութլունները  
յիրբեմն կանցնեյին հաջող, յիրբեմն անհաջող, Յերբ  
բանվորուհի մը դիմադրություն կցոցուներ Արտաշե-  
սի առաջարկին, մայրս կրտակ կտրած կդառնար տուն  
և կսկսեր բարձրածայն խոսիլ։

— Կըսին կոր քի Արտաշը գինով շունին մեկն ե,  
փարաները կառնե կուտե…

Յես կփորձեյի բողոքել այդ լենթադրության  
դեմ, բայց մալրս խոսքս կխափաներ…

— Յես ալ ըսի՝ թնդ ուտե, անուշ ըլլա…

Ինձ կնայեր խիստ աչքերով, ինչպես թե յս ըլլակի  
Արտաշը ամբաստանողը, բայց անմիջապես կմեղմանար  
և կիրատեր։

— Ողուլ, նայե, վոր մեղի պես եղ չմեծնաս. այս  
աշխարհս տասնկ ե, այնչափ մեջքերնիս ծուեր ենք, վոր  
գլուխնիս վեր հանելու, արեին արդար լուկսը տեսնելու  
կվախնանք։

\* \* \*

Բոլոր բանվորական թաղերու մեջ իրարանցում կար: Ամենքն ալ չարաչար տառապեր եյին խիստ ծմեռեն և վոմանք զոհեր տվեր եյին և հառաջիկա տարվա համար ածուխի պահեստ մը ունենալու հեռանկարի չափերը կհամարեյին գործնական և իրավործելի: Այդ որեւ ըուն Հայրապետ ամուճաս հաճախ կուգար այցելութեան և մեզ կպատմեր ուրիշ թաղերու անցուդարձերեն: Արտաշես շատ համակիրներ ուներ, ասկե զատ ամենուն աշքը կրացվեր, տուներու մեջ կիները, իսկ սրճարաններու մեջ բանվորները անդադար կխոսելին և կվիճելին և կսկսելին ճար փնտուել իրենց հոգերուն համար,

— Ամեն մեկս մեր լուզին մեջ կտապէլվինք, կըսեր Հայրապետ ամուճաս, բայց լեթե միանանք, շատ բան կընանք ընել:

Ինքը դարբին եր, ուրիշ ևսնաֆե, բայց լազմաճիներու ձեռնարկած գործը կգտներ որինակելի:

— Դուք շատվոր եք, կըսեր մորս, ասկե զատ ձեր եսնաֆին մեջ երիկ կնիկ կաշխատին... մեր կնիկները տունի հանըմ են, չեն ուզեր ատանկ գործերու խառնվիկ, մեզի ալ թող չեն տար:

Բայց լազմաճիներու մեջ ալ կային դիմադրողներ, և իրիկունները հորս և մօրս խոսակցութենեն կհասկնալի, վոր հայրս ալ շատ հավատք չուներ:

— Այ մարդ, կըսեր մալլս սրտնեղած, տահա ի՞նչ կըսեք, կովը ուաֆը մի հանեք... մենք ի՞նչ դործ ունինք Տյովլերի \*) հետ. ինչու պիտի վախնամ լեղեր, իերբեն ի վեր քյոմուր առնելը հանցանք ե... Քա,

<sup>\*)</sup> Պիտություն:

դողերը, ավագակները քոքուշքոքու կպտտին, ուս \*\* )  
ըսող մը չկա, աչքերնին մեզի՞ տնկեր են. ըրածնիս  
ինչ ե. մեր հերալ աշխատանքով վաստկած փարաները  
պիտի միացնենք, ածուխ պիտի առնենք, ուրիշ բան  
մը կմ:

— Ասոնք աղվոր բաներ են, ամա մեզի համար  
չեն. կըսեր հայրս:

Մայրս կատաղությունեն կփրփրեր և լուտանքներ  
կթափեր անոնց հասցելին, վոր կուղելին գործը խառ-  
նակել.

— Դուն ինծի ան ըսի, վորմւ ոգուտ ունի մեր քյո-  
մուրսիզ մնալը... Գել Նիկողոսին, քյոմուրձի Ավա-  
գին... անանկ չեմ... ոչ մարդ, մենք բանվոր չենք,  
յեսիր ենք իրենց ձեռքը... աս մեջ մը աղեկ դիտցի՛մ...  
ձեռքերնուն գա, մեզի կիսեղդեն պուտ մը ջուրի մեջ:

Այս ատեն հայրս թուլլ ձայնով ավելի հանգամա-  
նորեն կիսուեր վտանգի մը մասին:

— Ժամանակները գեշ են, Նունիկ, խելքդ գլուխդ ժող-  
վե... նորեն կոմիտեձիներ բոներ են... մեկը ինծի  
ըսավ. Սեղրանկ, զուն քեամիլ մարդ ես, հասկցեր...  
տունե տուն փարա կժողվեք կոր յեղեր. կառավարու-  
թյունը վոր իմանա, ծուռ մտքի էիրթա, վազ ան-  
ցեք...

— Ո՞վ ե ատ վիեղեվենիլ, թող մեյտան գա, ոլո-  
տասխանը առնե. խրատ տվող շմտ... յերբ չոճուխս  
պաղ տունին մեջ չի դիմացավ մեռավ, դռներնիս  
զարնող մը չեղավ:

Մեռած զավակին հիշողությունը ալ ավելի կհրահը

\*\*) Շունը վանակելու համար կարծածված վանկ:

բեր մորս զայրույթը. անոր այտերը կկարմրելին, աչքերը հուր կժայթքեցին և ջղաձղորեն դլուխը շարժելով, ան կգոչեր.

— Աւ դանակը վոսկորներուս հասեր ե, ասկե անդինը չի կա . ի՞նչ կ'ուզե թող ըլլա. կովիլ պետք ըլլա՝ կկովինք... մեջ մը վոտքի յելենք, թող տեսնեն:

\* \* \*

Այս հուզմունքներու մեջ անցան նոր տարիի և ծնունդի տոնները: Վլվլուկը հասեր եր մինչև ըարեկեցիկ և ունեոր տունները: Թաղերու աղքատախնամները ասցաւիկ հանգանակության մը ձեռնարկեցին, վորոն այնորեն մասնակցեցան հարուստները և վորոնց ցանկին գլուխը կանցներ Գել Նիկողոսը: Հակառակ վոր ցուրտը մեղմացեր եր, ածուխի նոր բաշխում մը յեղավ աղքատներուն:

Սուրբ Խաչի առաջնորդ յեպիսկոպոսը և սուրբ Եօսրատապետի վարդապետը իրենց տոնական քարոզներուն մեջ խոհեմության խորհուրդներ տվեր եյին «ըարեպաշտ ժողովուրդին» և հորդորեր եյին ունկուները՝ լայն բանալ իրենց քսակները, մցաւ կողմէ հրավիրեր ելին չքավորները համակերպության և համբերության, «զի նոցա յե արքայություն լերկնից»:

Մայրս յերբեք յեկեղեցի չեր յերթար, բայց դրաց ցիներեն լսեր եր այս ըոլորը և կըսեր.

— Վայ գլուխնուդ, գալիք արքայությունը ձեզի ըլլա, մենք այսորվանը նալինք:

Կանխելու համար հետզհետե աճող իրարանցումը բանվորական թաղերու մեջ, թաղական խորհուրդները վորոշեր եցին քսանական ոխա վայտածուխ բաժանել

այն չքավորներուն, վորոնք աղքատախնամին չելին դիմեր իրենց բաժինը առնելու համար։ Թաղին քեկայուն կառաջնորդեր համալը, հետը ունենալով լուսարարը, վոր կշիռքը կկրեր ուսին վրա։ Յերբ մեր զըրանն ալ զարկին, մայրս պատուհանեն վռնտեց.

Հայտե՛, դառաւալանիդ քաշեցէք, ձեզմե բան ուղող կամ յես ձեր միտքը գիտեմ, մեղ խաղք ընել կուղեք. մենք աշխատող մարդիկ ենք, մուրացկան չենք...

— Խոսք ունիս, գնամ Գել Նիկողոսին ըսե. թեղ բանվորյեքը ավելցնե, հաշիվներուն մեջ խամին \*) չընե, մենք աս որին չենք հասնիր։

Մայրս մնաց անդրդիվելու Պուլպյուլ Տերեսիի թւշվառ թաղին մեջ շատերը հետեւցան մորս որինակին և այդ դեպքը ուշադրություն գրավեց։

Նույն իրիկունն իսկ Գել Նիկողոս հայրս տարեր եր գինետուն և մեկ յերկու ողի խացնելե յետք, ըսեր եր։

— Գիտեմ, հանցանքը քուկդ չե, կնիկդ և այդ ըստ լորը ընտղը, բայց զուն ալ երիկ մարդ ես մի չե... խոսքդ անցուը, չե նո կնկանդ փեշը հագվե, տունդ նստիր։

Ծնունդի տոնին տաներեց քահանաներն իրենց ծուխերուն այցելելով խոսեր ելին այս դեպքերուն վրա և պախարակեր ելին Արտաշեսի և անոր հետեւողներու վարմունքը, «յերկապառակիչ» կոչելով։ Ցած ձայնով խոսեր ելին նաև Արտաշեսի հոր Պլութի մասին, լեռը քաշվող ավաղակ, ապստամբ՝ իշխանության

\*) Խարդախություն։

գեմ. Արտաշն ալ հորը հարապատ վորդի. «բայց վերջը  
գեշ ե... հորը որինակը թող խրատ ըլլա...»:

Մեր տաներեցը Տեր Արսենն եր, բայց յերբեք չեր  
գուր այցելութիւն. այս անգամ յեկավ. Մայրս խաճիկն  
մը յեփեց, հրամցուց և լուռ նստեցավ. Տերտերը  
բազմոցին վրա կելիք, կնստեր և իր փեշերեն խուն-  
կի հոտ կտարածեր. Յես և մեծ յեղբայրս մինակ ներկա  
ելինք. Քահանան յեղբօրս ուղղելով խոսեցավ «ազգի  
ցավերուն վրա»: Գավառներե գեշ լուրեր կալին...  
«Մեր հայ ժողովուրդը կկեղեքվի»... Միքե, ըստ  
վերջապես Տեր Արսեն, դուն արդեն տասնըշորս տարե-  
կան յեղար, խելքդ գլուխդ աղա լիս, հայրդ հոդնած,  
մաշած մարդ ե, ալ դուն տիրություն պիտի ընես  
մորդ ու յեղբայրներուդ. քեզ նայիմ, ազգը քեզի պիս  
մարդոց պետք ունի. միս, միս, հառաչեց խոսքը վեր-  
ջացնելով, լուրերը գեշ են, գեշ...

Հանկարծ անդրադարձա, վոր վերջերս յեղբայրս  
գրավված եր մտածումով մը և այդ միջոցին տերտե-  
րին խոսքերը կլսեր մոռայլ յերեւյթով. մտաքերեցի,  
վոր անիկա դպրոցեն արձակվելուն ալ ևս չեր յեր-  
թար մլուսներուն հետ փողոցը խաղալու և մորս իրա-  
րանցումին կմնար անտարբեր:

— Մարդու ինչով մարդ ե, ավելցուց Տեր Արսեն.  
անկանները միայն իրենց փորին կմտածեն... մարդ  
լսածդ նյութականնեն անդին կխորհի... Վորդիք, շա-  
րունակեց խոսքը մեր յերկուքին ուղղելով, մեր ազգը  
գերի յե անորեններու ձեռքը. պետք ե վոր ազատվի,  
ոգնութիւմը «թագավորաց քրիստոնեյից», ձեզ ալ որ  
մը տեսնեմ «զինվորյալ մանկանց նոցա» շարքին մեջ...

Ե՞հ. Նունիկ հանըմ, ըստի վերջապես մորս դառնալով,  
ինկամանդ բեր, տունդ որհնեմ:

— Խնկաման չունիմ, պետք չե՛, ըստի մալրս չոր  
ձախով և յերեսը անդին դարձուց:

Տեր Արսեն վոտքի յելավ, փեղերը հավաքեց մեկ  
ձեռքով, սև մուրուքը շոյելով նայեցավ մեր յերեքին  
վրա. հետո մեր յերկուքին զլուխներուն վրա խա-  
չակնքեց և մեկնեցավ գլուխը շարժելով: Դրանը առաջ  
պահ մը վարանեցավ և հետո ըստի մորս.

— Ատ զինով Արտաշեն շատ յերես մի տար...  
նայե՛, խոսք կընեմ կոր...

— Դուն հոգի մընեք, ըստի մալրս կտրուկ:

Յերբ սենյակը մտանք, մալրս պատուհանները  
բացավ, վորպեսզի «մեռելի» «ոտը» փարատի և մտա-  
խոհ նատեցավ կրակարանին առջև, հետո նայվածքը  
սկսեց Միքեյին վրա:

— Յես կերթամ կոր... ըստի Միքե դուրս յելլելով:

Մայրս ինձ դուրձակ և բան մը պիտի ըսեր, յերբ  
հանկարծ գոչեց.

— Ողո՛ւլ, ինչ ունիս... ինչմէ դեղներ ես:

Յերկու յերեք շարաթե ի վեր լավ չելի. սիրու  
հաճախ կխառնվեր, և առտունները գլուխս շատ ծանր  
եր: Մայրս բարձ մը տվավ, վոր բազմոցին վրա  
յերկննամք կկարծեր, վոր խունկի հոտն եր պատճառը,  
վոր իրեն ալ գլխի ցավ կուտար: Այս խորհրդածու-  
թյունները լսեցի, մինչև վոր բազմոցին վրա յերկնցա  
և պառկեցա. հետո հանկարծ սենյակը դարձավ շուրջու,  
աչքերս մթնցան և գիտակցությունս կորանցուցի:

\* \* \*

Ամեն տարի գարնանամուտին և աշնան, թիվոյի  
համաձարակը նախճիր կզործեր Սկյուտարի մանավանդ  
աղքատիկ թաղերու մեջ։ Այս անգամ մեր տունեն  
յես իմ տուրքս կվճարելի։ Որերով տեսնդե բռնված և  
անգիտակից՝ տատանվեր ելի մահու և կենաց մեջ։  
Ալդ միջոցին գործերը վերսկսեր ելին։ Մայրս թե ինձ  
խնամեր եր և թե գործ առեր եր։ Յերբ առաջին ան-  
գամ աչքերս տեսան և ձանչցա ինձ ընտանի շրջապա-  
տը, մայրս թեղկցահին առաջ լազմա կրաներ. անիկա  
ավելի նիհարցեր եր. մաղերն անխնամ կթափվեյին  
չերեսին վրա, վորու ցցուն այտոսկրները կարմիր ե-  
ցին։ Յես դեռ չեցի աղատված մղձավանջի մը սպասա-  
փեն։ Յերազը և իրականությունը կշփոթվելին մտքիս  
մեջ։ Յերազիս մեջ փոխադրվեր եցի մեռել լվացող  
Մարիամին տունը, վոր հրդեհված վայրի մը ավե-  
րակներուն մեջ հյուղակ մը կրնակեր առանձին։ Մա-  
րիամ հանդիմանական շեշտով կխոսեր սըունքները  
մերկ, միաւն շաղիկ մը հազած գեր մեռելի մը հետ,  
վորուն այտերուն վրա շեկ մուրուքը կցցվեր ստեի  
պես։

— Հիմա հասկցմը ինչ և շատ ուտելը. այնչափ  
կերար խմեցիր, վոր սատկեցար։

Մեռելը խռպոտ ձայնով անորոշ պատասխան մը  
կուտար։ Ուրիշ մեռելներ, արդեն լվացված և պա-  
տանքված, արձագանք կուտային գեր մեռելին  
խոսքերուն և յես զարհուրանքով, ուրվականի մը պես  
կդեգերելի ալդ բոլորին մեջ։

Մարիամ ուղղվելով ուրիշ դիակի մը, վոր մեկ կո-  
ղին ինկած փալտե արձանի մը կնմաներ, կգոռար։

— Ե՞ն, դուն ի՞նչ կտանիս կոր հետդ... հալխին ար-  
լունը կքամելիր, չեյիր կշտանար... ձեռքդ ի՞նչ մնաց,  
անկուշտ շուն, արշին մը պատանք...

— Մայրիկ, ըսի... ու մորս աչքերը իմ վրաս սեե-  
ոեցան, մեռելները կիսուին...

— Քա յավրո՛ւմ, ըսավ մալրս և տեղեն լելելով  
քովս յեկավ. ինձ տվավ գզալ մը դեղ, ճակտիս քըր-  
տինքը սըրեց և անձկությամբ սկսավ դեմքս դիտել  
Բալց արդեն սթափված ելի:

— Գեղ յերազ տեսա, մայրիկ...

— Մարըդ մեռնի քու արեիդ...

Անիկա կհեկեկար առանց արցունքի և ինձ կնայեր  
սարսափած:

Բարեբախտաբար դրացի կին մը վրա հասավ.

— Քա գիտցա քի հոգեառները կտեսնա կոր...

— Ա՛լ անցավ, ալ բան չի կա, հոգդ մըներ, նունիկ  
հանըմ, դրացուհին կհանգստացներ մալրս. ինքզինքին  
յեկավ, աղիկի դարձավ, ըսել ե՞ որերը անցուց:

Ապաքինման յերկար շրջանիս, կյանքը վոր ընդ-  
հատիկեր եր ինձ համար, վերապարձավ իր հոգերով,  
հույսերով և պայքարներով: Հիվանդությունը հասուն-  
ցուցեր եր միտքս, կարծես տարիներ անցեր հյին  
վրայիւա: Դետիկ հաճախ կուգար ինձ տեսնելու. ան  
ինձ կպատմեր թե ինչեր կ'ընեյին Արտաշի ձեռնարկը  
ձախողեցնելու համար:

— Իրենց ի՞նչ, ըսի զայրացած:

— Իրենց ի՞նչ մի... ըսավ Պետիկ:

Դուն հաշիվ ըսե, վոր բանվորուհիներու աշխատան-  
քը ձրի կուզա Գեղ Նիկողոսին, անոնք ամբողջ տա-  
րին պարտք ու Փալիդի փոխարեն կաշխատին: Ինչ

չափ բանվորները պեխապեր մնան իրենց շահերուն, այնքան ամենուն գործին կուտա. Կորեղբալը ըստի:

Այն ատեն դեռ վոչ յես, վոչ Պետիկ, վոչ իսկ Արտաշ, չելինք գիտեր և չեյինք կընար ըմբռնել թե ինչ կարգի պայքարի մեջ կմտնելինք: Մենք ամենքս կույրերու պես կխարիսափելինք մթության մեջ և յերբ լուսի նշուցը մը չերեր, մեր թշամիները կիըշելինք վրան, կմարելին: Մեղմե վոչ մեկը, մեծ թի պղափիկ, գաղափար չունեցինք դասակարգալին պայքարի վրա, և բնավ չեյինք գիտեր, վոր աշխարհիս ամեն կողմերը մեզ նման մարդիկ կան և թե մենք վոչ թե հարգութներ, հազարներ ենք, այլ միւլոններ... Չեյինք գիտեր, վոր չքավորությունը, այդ կըակե շապիկը, դրոշակ և գարձած մեր անծանոթ և հեռափոր յեղ բայրներու ձեռքը, չեյինք գիտեր, բայց գիտելինք մեր ապրած կլանքովը և մեր կրած թշվառությունովը, վոր Գել Նիկողոսներ և քչոմուրճի Ավագներ բռներ եյին մեր կոկորդներեն և մեր արյունը կծծելին: Մենք այն ատեն դեռ չեյինք հասկնար թե ինչու յեկեցին և թաղին աղաները մեզ շահագործողներու հետ ելին, նեցուկ կըլալին անոնց, իսկ մեզ պես մարդոց միացումը՝ նույնիսկ ածուխ գնելու համար, կհամարելին ընդհանուրին վտանգ: Մենք այդ բոլորը չեյինք գիտեր այն ատեն, բայց դեռ այն ատենեն դղացինք, վոր մենք կմտնելինք անհաշտ պայքարի մեջ:

Իմ անկողինիս շուրջ սկսան ուրիշներ ալ դաշ դպրոցական ընկերներ, դրացիներ և մասնավորապես դրսեցի ուսուցիչ մը, վորուն Միքեն կապվեր եր ինչպես յես Պետիկին: Անիկա մաշած հագուստներով,

նի՞ար դեմքով, ղարիբ մարդ եր, բայց լերը խոսեր,  
դեմքը կայլափոխեր և տարորինակ հմայք մը կստա-  
նար. մայրս քաղցրությամբ կվարվեր այդ «պանդուխտ  
վարժապետին» հետ և լերեմն գլուխը շարժելով, կը-  
սեր.

— Ան ալ մար ծներ ե...

Որ մը դրսեցի ուսուցիչին խոսեցա Արտաշեսի մասին.  
անիկա լուս լսեց և հառաջեց.

— Մեղք, վոր ատանկ ուժեր իզուր կսպառին ան-  
կարեւոր զործերու մեջ:

Հետո ինձ խոսեցավ գավառներե յեկած լուրերու  
մասին, պատմեց թե ինչպես բռնի կմահմետակա-  
նացնեն, տուրքերու գանձումի պատրվակով կկեղեքին,  
կթալին, կսպանեն, աղջիկները կվախցնեն...

Զարհուրած մտիկ կընեցի այդ խոսքերը, սիրաս  
ուժգին կրաքախեր և կնայելի իր մաշած դեմքին և  
տխուր աչքերուն, վոր այդ բռլորը տեսեր ելին:

— Դուն դեռ պղտիկ ես, յեղրակացուց ան, յերբ  
մեծնաս, կտեսնես վոր այդ նյութական խնդիրներեն  
զեր և զուրս ուրիշ վեհ նպատակներ կան... և այդ  
նպատակներուն հասնելու համար պետք ե, վոր ամ-  
բողջ ազգը, հարուստ, աղքատ, միանա:

Հիշեցի Տեր Արսենին խոսքերը, Միքելի վարմուն-  
քը, միտքս պղտորեցավ և հետեյալ որը խոսեցա այդ  
մասին Պետիկին հետ:

Պետիկ լսեր եր, վոր Միքեն հաճախ գաղտնի ժո-  
ղով կերթար. իրեն ալ խոսեր ելին և ուզեր ելին  
«զրել», Բայց յերբ խմացեր եր, վոր քրոնուրճի Ավա-  
գին տունը կհավաքվին և այս վերջինն ալ «անոնցմե»  
լի, հրաժարեր եր:

Արտաշն ալ մերժեր եր և գալրացեր ըսելով.

— Մենք մեր գործին նայինք. անոնցմե գալիք խեր թող սատանայեն գա:

Յազմաճի բանվորներու ձեւնարկած գործը, հակառակ բոլոր հարուցված դժվարություններուն, ստացեր եր հաջող ընթացք: Բանվորները, բայց մանավանդ բանվորուհիները, վարկ կընելին Արտաշին և արդեն փետրվարի վերջերը հավաքված դրամը անցեր եր քան վոսկեն: Հետինետե թերահավատները յեկեր միացեր ելինու: Յազմաճիներու հանաֆի բելիզը, վոր մինչև այդ «մյուշեվիշ») դիրք բռնած եր, սկսեր եր քաջալերել Արտաշը, վորովհետե կուզեր մամնակցիլ անոր հաջողության: Արտաշ մտադիր եր յիրթալ գյուղերը, առաջուց պայմանավորվերու համար ածխազործներու հետ:

Նույնիսկ հայրս սկսած եր վոդեորվիլ:

— Մեր ածուխը, կը եր ան, ամենեն աղեկը պիտի ըլլու: Ավագին բերանը չի բացվիր կոր: Մենք չըլլանք՝ վորմւ պիտի քշե, ան ալ բարձր գիներով, իր խխումթաց մճիրը. հերու չամչնալով բացե ի բաց կըսեր. յերթամ ու ձիուս ջուր տամ...\*\*) թնդ աս տարի ալ ըսե...

Մայրս լուռ կժամտեր և կզգուշանար հորս յերեսին. տալու իր կասկածները:

\* \* \*

Եարա ամսու սկիզբը քույրս՝ Արտևակ հիվանդացավ, ա՞ նկա ութը տարեկան եր. մեր աչքին չեր

\*) Յերկողմէ:

\*\*) Ակնարկություն վայտաժուխը ջրելուն, վորուեսզի ծանը լըսուի:

յերեվար. բայց դրացիները կնշմարելին անոր փափուկ գեղեցկությունը:

— Ճանրմ, վորու ալ յելեր և, կըսելին իրարու, աղվորիկ, նազուկ աղջիկ մը պիտի ըլլա:

Հանկարծ սկսա ուշադրություն դարձնել քրոջս և մտահոգվիլ անոր առողջությունով: Անիկա արտակարգ կերպով զգայուն եր քնության տեսարաններուն, կարծես իր աչքերը կը տարրալուծելին գույները և ամենանուրբ յերանգները կորսալին: Իրիկունները, վերջալուսին, յերբ յերկինքը կշառագուներ սև նոճիներու լետեն, Արուսյակ աչքերն անքթիթ կհառեր լուսածիր ամպերուն, վարոնք անզգալիորեն կձևափոխվելին և գույն կփոխելին: Ան կրած տպավորություններու սաստկութենեն տառապագին դիմք կստանար, Դրսեն յեկած ձայները, նոճիներու յերկարածիդ սոսափյունը, թոշունի մը ճիշը, ձորեն հոսող ջուրերուն խոխոջը զինքը կփոխադրելին ուրիշ աշխարհ: Անիկա, մեղմիկ և քնքույշ, կապըեր մեղ հետ ինչպես ուրիշ տեսակի ելակ և կարծես զգուշանալով զգալի զարձնել իր ներկայությունը:

Հակառակ վոր Արուսյակ յերբեք չեր զանգատեր, մալրս անզրադարձեր եր, վոր որե որ «Ճարե կ'ինա», չուտեր և կհազա, իսկ զիշերները, արթուն ըլլար թե քունի մեջ, անզադար կհեծեր՝ ինչպես յեթե մշտատեցավ մը ունենար:

Վերջապես մալրս կանչեց հեքիմ թուբենը: Անիկա խլսլիկ ծերունի մըն եր, վոր կըսեր զինվորական մաշած և վոսկեթափ համազգեստ: Ժամանակին ծառայած եր զինվորական թյուրք բժիշկի մը և վորոշ փորձառություն ուներ, բայց վորովհետեւ արտօնված չեր

բժշկութիուն ընելու, շատ փոքր վարձք մը կառներ և այդ պատճառով դարձեր եր բանվորական ընտանիքներու բժիշկը. ասկե զատ, խոնարհ մարդ եր և դուռըավ կմտներ աղքատիկ ընտանիքներու դրության մեջ. մայրս կըսեր վոր հալե հասկցող հեքիմ ե:

Անիկա քննեց քրոջս կուրծքը և կռնակը, նայեցավ բազկերակը, դիտեց բազուկները. և գլուխը շարժեց տարակույսով:

Կարմըուկեն հետքեր մնացեր ելին, պետք եր արե, մաքուր ոդ, լավ մնունդ. այդ բոլորին փոխարեն պատվիրեց ձկան լուղ:

Մայրս շվարած մնացեր եր, յերբ Հայրապետ ամուճաս լեկավ հորս հետո Բացի Սիքեեն, վոր սկսեր եր համ առնել ուսմունքե, մյուս յերկու լեղբալրներս, Արթին և Ոհան, մեկը տասնըմեկ և մյուսը տասներիք տարեկան, համառորեն կդիմաղբելին դպրոցական կլանքին. վոչ հորդորները ոգուտ ունեցեր ելին, վոչ պատիժները. ծնողքս մտադիր ելին յերկուքն ալ դպրոցին հանել և արհեստի տալ Հայրապետ ամուճաս Արթինը պիտի առներ իր քով աշկերտ, իսկ Ոհանը հանձնարարեր եր ուրիշ յերկաթագործիւ Մայրս շատ գոհ չեր յերեկը այս կարդաղբութենեն, բայց Հայրապետ ամուճաս կհամոզեր—.

— Ուժերնին, լուսերնին տեղն ե, թող յերթան արհեստ մը սորվին, դուք ալ քիչ մը կթեթենաք և աս չոճուխին կնայիք, կըսեր ան քույրս ցույց տալով, վոր բազմոցին վրա պառկած, անտարբեր շուրջը անցած դարձածին, կժպտեր տիրորեն կարծես անհրեսով բանի մը:

\* \* \*

Տնեցիներուն մեջ, քուլըս ամենեն շատ ինձ մտեր-  
մացած եր, հաճախ իր տենդու և քրտնած ձեռքը դնե-  
լով ձեռքիս մեջ, կաղերսեր՝

— Ազբարիկ, ինձի տխուր պատմություն մը պատ-  
մեւ

Յես կշանալի պատմել ուրախ պատմություններ,  
բայց ան անտարբեր կմնար, անոր դեմքին վրա  
նույնիսկ ժպիտը սիրտ ճմլող տխրություն մը ուներ.  
ուե, լայն բացված աչքերը կարծես զարհուրած ելին,  
և այդ արտահայտությունն այնքան խոր ցավ կպատ-  
ճառեր ինձ, վոր յերբեմն պատմությունս կիսատ կթող-  
նելի, կնետվեցի փողոց և բոլոր ուժովս կվաղեցի զա-  
ռվիվերեն, մինչև վոր հեվասպառ մնալի. այն ատեն  
սիրտս կիսաղաղեր և տուն կդառնալի:

Գարնանամուտի այն գաղջ յերեկոյին, յերբ տուն  
դարձա, մալրս խոհանոցի դրան առաջ ապաները կլվար:  
Ցեխոտ կոշիկներս հանեցի և գուլպաներով ծարձրացա  
սենյակ. մթնշաղ եր, մեջտեղը գրված կրակարանին  
մեջ կրակները կփալիկին, բայց անոնց լուսը կա-  
ղոտնար շոգիի մեջ, վորովհետև յերկաթե յեռոտա-  
նիին վըա դրված թենենենյօվ մեր ընթրիքը, լուրիան,  
կխաշեր գթգթալով: Անոր բուրմունքը վոր խաշած  
միսի հոտին կնմանցնելի, հաճելի յեր ոռւնդերուս,  
բայց այդ միջոցին ավելի ծարավ ելի, քան անոթի,  
շըթներս կտոչորեցին: Յերկար դեգերումներս զարնան  
իրիկուններու հատուկ տենդու մթնոլորտին մեջ,  
կջլատեցին սրունքներս և թեկերս, տեսակ մը յերազա-  
յին մշուշ գրավեր եր միտքս և կարծես պատրաստ ելի  
լալու կամ խնդալու: Հանկարծ աչքիս յերկցավ Հրա-

նուշը, քրոջս լնկերուհին: Անիկա կհաղներ վարդագույն գոգնոց և սև մազերու թանձր հյուսկենը, կոճակին վրա, կապված եր կարմիր ժապավենով: Հրանուշ սիահձի \*) Ոհաննես աղալին աղջիկն եր, ունտնք հին ընտանիք մըն ելին և կրնակելին Սելամոբղի թաղը, իրենց պապենական փայտաշեն և մեծ տունին մեջ, վորուն ճակատը և շահնըշիրները զարդարված ելին կլիսիններով: Մորս կարծիքով Ոհաննես աղան քիալար մարդ եր, խելացի և ուսյալ, վոր զանաղան դեպքերու հետևանքով քանասուն տարեկանին հետո արհեստ սորվեր և սիահձի յեղեր եր, բայց ինչ վոր Ոհաննես աղալին արժանիքը կվազմեր, այն եր, վոր դյուրահաղորդ եր բանվորներու համար: Անիկա աշխատանքի հարզը գիտեր և չեր զլանար խղճամիտ խորհուրդներ տալ անոնց, վոր իրեն կդիմեցին: Անիկա իր արհեստանոցը հաստատեր եր Յենի Մահալեյի խանին մեջ, ուր չորս աշխատավորներու հետ ինքն ալ կաշխատեր: Հրանուշ հորը պես դյուրահաղորդ եր և բարեկամացեր եր քրոջս հետ:

Մեկեն զգացի, վոր կհուսալի Հրանուշը գտնել քրոջս մոտ, բայց տեսա քույրս մինակ, ունմքը բարձին պես ճերմակ և անշարժ:

Ան չեր քնանար, բայց միաքը սևեռած կթվեր խորհըրդավոր բանի մը վրա, յերբ մոտը գացի, տենդոս ձեռքը դրավ ձեռքիս մեջ և տարորինակ ժպիտով մը, վոր հազիվ կուրվագծվեր և կանհետանար դեմքին վըրա, ըսավ.

— Աղբարիկ, քեզի զաղտնի բան մը պիտի ըսեմ, խոսք կուտամս, վոր մայրիկիս չես ըսեր:

\*) Ցաղմայի սև գծաղրությունը կոխողէ

Գլխովս հաստատական շարժում ըրի:

— Ուրիշ մարդու ալ չես ըսեր:

— Վաչ, չեմ ըսեր:

Հետզհետե դեմքս մոտեցուցեր ելի քրոջս դեմքին և  
կսպասելի:

— Յես շուտով պիտի մեռնիմ, ըսավ ան և յերա-  
նության ժայռ մը սկսուցավ իր դեմքին վրա:

— Խենթ, ըսի սարսափած, ինչու ատանկ բան  
կըսես:

— Գիտեմ, պատասխանեց Արուսիակ, և գոհ եմ...  
Ինձ պիտի դնեն ճերմակ մնառուկի մը մեջ, վրան ալ  
կապույտ ժապավեններ, յեաքն ալ յերկինք պիտի լեր-  
թամ...

Աչքերը հառեց մթնցող յերկինքին վրա մեղմորեն  
անցնող զորշ ամպերուն, անոնց վերսեն ճերմակ ամ-  
պի ծվեն մը յերկարած թերով կսավառներ և կհառա-  
ջանար արագ:

Արուսակ մատովը ցուց տվավ աչդ ամպը:

— Ինձ լուր բերավ, ըսավ մըմն ջելով, անիկա հրեշ-  
տակ մըն ե, յես ալ հրեշտակ պիտի դառնամ:

Յել ինձ նալիցավ աղիողորմ նայլածքով:

— Այդպես բան չի կա, գոռացի ինքզինքես դուրս  
յիւած... Այդպես բան չի կա, սուտ ե, սուտ, Արուսիակ:

— Զարուհին ըսավ, պատասխանեց շնչառապառ.  
Զարուհին ըսավ, վոր յերբ պղտիկները մեռնին, յեր-  
կինք կերթան:

— Քեզ խարեր ե աչդ ջղիկը, պնդեցի. իրավ հ  
նե թնդ ինքը յերթա... սուտ ե....

Զարուհին Պլութող ողլու խաչիկին աղջիկն եր, քուլու

ձյունհալեն ի վեր դպրոց կ'երթար, և հոն ճանչցեր եր Զարուհին և Հրանուշը:

Ինձ այնպիս կթվեր, վօր յեթե քույրս համոզվեր, վոր այդ բոլորը ճիշտ չե, չի պիտի մեռներ:

— Սնւա ե, գոչեցի կրկին, և աղիքներս գալարվեցան, վորու կուզես հարցուր, սուտ ե, Արուսյակը պիտք չի մեռնիլ... մեռելը կթաղեն և հող կդառնա, ուրիշ բան չի կա. Զարուհին քեզ խարեր ե:

— Ի՞նչու, ինչու, կենծեծեր քույրս, և ձեռքերը կը գալարելին վերմակին վրա, հետո սկսավ արտասվել գլուխը բարձրացուց դրավ ուսիս, և կշարունակեր հեծ կլտար:

— Դուն պիտի աղեկնաս, Արուսյակ, ըսի մազերը շոյելով, մենք յերք մեծնանք, միասին կաշխատինք, իճատիե տուն մը կրոնենք, պարտեղ ալ կունենանք, մեջն ալ վարդի ծառ կտնկենք...

Արուսյակ արցունքոտ աչքերը գարձուց ինձ և սկսավ վիճիք:

— Ցես հասմիկ կուզեմ, նուշի ծառ մըն ալ կտնկենք, աղվոր ծաղիկ կուտա, անմանկ կսիրեմ նուշի ծառը, յերք ծաղկի, կարսիս, Թնամնկ... ինչպիս ըսեմ—:

— Վարդ ալ կտնկենք, հասմիկ ալ, նուշի ծառ ալ ուղածդ ադ թող ըլլա, մինակ թե մել մըն ալ Զարուհին պատմություններուն մի հավատար:

Արուսյակ գլուխը կրկին բարձին դրավ և լուռ մընց, Գետո հառաջեց.

— Աղվոր պատմություն եր...

— Սուտ եր, Արուսյակ...

— Թոնի սուտ ըլլա ։ յերբոր մեծնամ, պիտի գրեմ... Ու յերկար մեացինք քով քովի, խոսելով ամպերուն

Իճատիեյի մեր ապագա տան, ընկերներու և ընկերունելիքու վրա և ամեն անդամ վոր Հրանուշին խոսքը կըլար, ջերմություն մը կանցներ ամբողջ մարմնես, ինչպես յեթե դուլմը տաք ջուր թափելին գլխես վար:

\* \* \*

Այն իրիկուն հայրս ուշացավ. մայրս մտահոգ եր և շարունակ կկրկներ.

— Աս մարդը մեր մնաց աս սահաթին...

Կերթար վարագուրը մեկ կողմ կառներ և անձկությամբ կնայեր մութին մեջ. վերջապես չի կրնալով համբերել, ըսավ.

— Քուղում կարպիս, գնա նայե, մեր և, Ֆեսֆեսիի \*) մեջ եմ:

Գիշերը գաղջ եր և հակառակ վոր լուսին չի կար, պայծառ յերկնքին վրա նշուլող աստղերը կճերմկցնելին ճամբաս. հեռուն պարտեզներու մեջ զորտերը կը կռկռային և ողին մեջ ցիր ու ցան բուրմունք մը կար: Զեռքերս տարատիս զրպաններուն մեջ անցա թարլապաշին: Բարեկեցիկ տուներու շարք մը իրենց լուսավորված պատուհաններին վարդագույն և գեղնորակ ցոլքեր կարձակելին: Ժանյակի վարագույրներու յետեն յերիտասարդ աղջիկներու դլուխներ կերելին: Տապակած մսի կամ ազնիվ տեսակի ձուկի հոտը կընկերանար քայլերուն: Բաց պատուհանե մը կլսվեր դաշնակի ձայնը... Ինչքան տարբեր և ոտար աշխարհ մըն եր այդ: Անորոշ անհանգստություն մը սիրոս սեղմեց և քայլերս արագացուցի: Անցա Սելամիելի շուկային, նայեցա մեկիկ-մեկիկ սրճարաններուն մեջ,

\*) Մտահոգ:

վոր ալիք ժամուն արդեն զատարկ ելին, և մեկ յերկու հետամնաց հաճախորդներ ունեցին: Վերի սրճարաններեն մեկուն մեջ, Գել Նիկողոսը պահակատան թիւրք վոստիկաններուն հետ նստած, թուղթ կխաղար: Անցա, և համնելով գորանոցին առաջ, պահ մը վարանեցա և վերջապես մտա գինետուններուն փողոցը:

Հայրս դտա լեռըրդ գինետունը: Անիկա նստած եր ցած սեղանի մը առաջ Արտաշի և քյոմուրճի Ավագին հետ: Կաթի պես ճերմակ, ջուրով խառն ողիով լի բաժակը կտաներ շրթներուն և դեմքը կծամածուեր: Յերը ինձ տեսավ, ուղեց տեղեն լելեր, բայց ընկերներն արդիլեցին և ինձ ալ կանչեցին: Արտաշ ձեռքը դրավ դլիսիս, գինեպանին լոգում մը ապսովրեց ինձ համար, և շարունակեցին իրենց խոսակցությունը:

Քյոմուրճի Ավագ հայրս գտեր ես փավլիքային դուրս լելած պահուն, և միասին տարեր եր գինետուն, ըսկելով, վոր Արտաշին հետ համաձայնության պիտի գա: Հայրս կցանկար, վոր ամեն ինչ կարդադրվի հաշտությունով, Քյոմուրճի Ավագ կառաջարկեր Արտաշին կրկնապատկել բանվորներե հավաքած դրամը և ընկերովի գնել փայտածուխը:

— Ցած գին մը կորոշենք, կմնանք աղ գինին վրա... Հալիսն ալ շահ կզտնա, յես ալ:

Արտաշ իր սև և վոլորուն պեսերուն տակեն կխընդար լիաթոք:

— Կամ քու տունդ քանդվի, Ավագ, վորուն փարան վորու պիտի տամ:

Ավագ ծոծրակը կըերեր, նոր ողի կպատվիրեր և հորս գառնալով կըսեր.

— Սեղրակ, աղեկ մտիկ ըրե՛, դուն չոլուխ չոճուխի

աեր մարդ ես. քու աղեկությանդ համար կըսեմ կոր. Զեր ունեցած փարաով առիք յերկու, չերեք, չորս արալա ածուլս...

— Տասը, տասներկու, ընդիմիջեց Արտաշ:

— Թողը ըլլա, յավրում, տասը, տասներկու: Եհ, ըսենք վոր աս տարվան պես ձմեռ մը ըրավ. վմբ մեկերնող պիտի բավե ատիկա: Զյուն ձմեռվան մհջտեղը նորեն քյոմուրսիզ կմնաք: Զեզի պեսներուն համար ասդին դառնաք, անդին զառնաք, մեկ ե. կենեկու.. ինչ պիտի ընեք. նորեն քյոմուրճի Ավագին դուռը ձեռք պիտի առնեք...

— Հաշմ, գոռաց Արտաշ:

— Ճանը՝ մ, պոշ խոսք մըներ, ուղեք չուղեք ձեռք պիտի առնեք...

Հայրս հավանության նշաններ կըներ: Արտաշ վերջապես գոչեց Ավագին յերեսին.

— Ծո՛, դուն ինծի ով գիտցար... յես թաղական աղա յմմ, ինչ եմ, վոր հայսին եմանեք \*) փարան առնիմ, զրպանս դնեմ և ինծի համար գործ բանամ... Ֆնա՛ մամալդ ուրիշին կարդա՛:

— Դուն գիտես, ողլում, ըսավ Ավագ, յես գործը անուշ աեղը կապել կուզեմ կոր, քու աղեկությանդ համար կուզեմ կոր... մեղք քո ի զլուխ քո, յետքը գեշ ըլլա, չըսես վոր Ավագը չըսավ...

Յես ու հայրս վոտքի յելանք: Արտաշ կարճ վերաբ- կուն ուսին նետեց և մեզ հետեցավ: Ավագ անհետա- ցավ մութ փողոցին մեջ:

Ճամբան Արտաշ հօրս կպատմեր.

\*) Ավանդ:

— Տահա ի՞նչ կհնարեն. յերեկ ալ Գել Նիկողոսը  
յեկեր ինծի կըսե կոր, վոր ազեկ տեղե աղջիկ պիտի  
տան լեղեր ինծի... Ծո՛, ի՞նչ ե ըրածնիս, վոր ասչափ  
իրար անցեր են, յեղածը չեղածը ան ե, վոր քանի մը  
վոսկի հավաքեր ենք, աժան ատենը ածուխ առնելու  
համար... վեսելամ...

\* \*

Այն տարի մարտ ամիսը կծավալեր արևոտ որերու  
շարքի մը մեջ; Ամեն առավոտ արևի ջերմ ճառագուլթներ  
անհամար նշույներով կզարդարեցին ցողաթուրմ խո-  
տերը, վոր կանանչ թավիշի տես կեզերեցին մեր տան  
փողոցը; Դրացի պարտեզներու մեջ պտղատու ծառերը  
ծաղկեր ելին և վարդադուն ու ճերմակ ծաղկաթեր-  
թեր, գառն նուշի բուրմունքով, կժռչկատեցին ողին  
մեջ, յերբ հովը փչեր; Բայց Պյուլպյուլ Տերեսի խոր-  
քեն միշտ կթավալեցին դարշահոտ կոհակները և յերբ  
հարավային քամին փչեր, անոնց նողկալի հոտը վոչ  
միայն կխափաներ ծաղկյալ ծառերուն թարմ բուր-  
մունքը, այլ նույնիսկ կխուժեր փակ տուներե ներաւ:

Բայց մարդ սիրա չուներ ուշադրություն դարձնելու  
այդ բաներուն Յերեք շարաթի ի վեր հրդեհներ տեղի  
կունենալին Յենի Մահալելի, Սելամուզզի, Տաղհամա-  
մըի և Իճատիեյի խիս թաղերուն մեջ: Յորեկները, հա-  
ճախ, կարմբազգեստ նյոպետնին\* ) նիզակը ձեռքը կը  
վաղեր փողոցներեն, յերթալ իմացնելու համար աղետը  
գլխավոր պահականոցին, և յոթը անդամ թնդանոթները  
կթնդային:

\* ) Հրդեհի լուրը տանող սուրհանդակ:

Գիշերները հաճախ կարթնալի գիշերապահի լեռ-  
կարածիկ ազաղակներեն.

— Յանկուն վաստամը .. Խճառիկուն .. Մանաս-  
բոլ սոգաղընտամամ..

Յեկ ճոկանին հարվածները քարի մը, կամ սեմի  
մը վըսա.

— Տանկ... տանկ... տանկ..

Դարձյալ թնդանոթի յոթը հարվածները կթնդալին  
և բոլոր թաղերեն, հեռավոր և մերձավոր, գիշերապահ-  
ներու թավ կամ խոպոտ ձայնները չարագուշակ կան-  
չերով կերպարածքվեցին աստիճաններով:

Հաճախ, մայրս կելիք, պատուհանը կըանար և կը  
պիտեր ուուրսը: Շուները կկազկանձեցին, քամիկ հեղք  
մը շնչառպառ վագիկ մը պես կանցներ միջոցին մեջին.  
Երբեմն ալ կտեսնեցինք հորիզոնը բոցավառ կարմիր  
ցոլքիւով:

Գիշեր թե ցորեկ հայ ջրհանկիրները վոտքի վըս  
եյին. անոնց կուգային կմիանալին հույն և թյուրք  
թաղերու. ջրանկիրները և փողոցները կեցնելին իրենց  
հելքոտ վաղքերով, մրցումներով և աղաղակներով:  
Կառավարական հրշեցները, քայլըները, գրեթե միշտ  
կհասնելին հրդեհին մարելն լիւտքը և հաճախ լինթա-  
կա կըլլալին թաղերու ջրհանկիրներու ծաղրանքին և  
նախատինքներուն:

Որե որ կացությունը կդառնար սպառնական, զա-  
նազան շշուկներ շրջան կընելին, տուներու մեջ փըս-  
փոտակ կըսկիին, զոր խութախմիներու \*) խումբ մը  
կա, զոր հրդեհ կծդե կողոպուտի նպատակով: Թաղերու  
պահականոցներն անտարբեր կմնալին. վոստիկաններն

\*) Հրձիդ:

իրենց յեղած ցուցմունքները ականջի յետև կձգեցին:

— Վայ գլուխնուն, կըսեր մայրս, մունտառները գող ավաղակներու հետ մեկ յեղած են, իրենց բաժինը ունին:

Վոմանք ալ կկարծելին, վոր ամահովագրական ընկերության մարդիկ են այդ հրձիգները, վորովհետև հրդեհի վախը կմղեր ամենեն անտարձերները ապահովագրվելու: Յեզ միշտ ե, վոր ամեն անգամ, հրդեհն մը անմիջապես յետքը, սիկուրդանի \* յներ տունն տուն կպտտելին և իրենց ծառայությունը կառաջարկելին:

Վերջապես Պյուլպիու Տերեսիի, ինչպես և ուրիշ բանվորական թաղամասերու մեջ ազգաբնակչությունը կազմակերպեց պահակություն: Փոխն ի փոխ փողոցի մը մեջ մեկը կհսկեր և վոեն անձանոթ մարդու մը անցքը կենթարկվեր խիստ քննության: Յեվ հրդեհները դադրեցան:

Ալդ իրարու հաջորդող հրդեհներու միջոցին, Արտաշ միշտ վաղեր եր հրդեհին վալրը, թողեր եր գործը, դարձեր եր սրտնեղ և հարձակողական ու անձնատուր յեղեր եր արբեցության, Կասկածն սկսեր եր սպրդիլ մտքերու մեջ, շատեր չելին խոսիր, բայց կը մտածեյին, Բնչ յեղամ հավաքված դրամները: Արտաշ գինետուններեն դուրս չեր լելներ, կպատմելին, վոր հաճախակի կռիվի կրանքեր մեկին և մյուսին հետ, գինետան ապակիները կոտրեր եր, և վերջապես վոստիկան կանչեր ելին զինքը զապելու համար, բայց Արտաշ, աչքը դարձած, յերբ տեսեր եր վոստիկանը, նետվեր եր դիմացը և նայվածքով վոտքեն գլուխը չափելով գոռացեր.

Վա՞ր մը պանա յան պահան \*\*\*)..

Գինետան մարդիկը միջամտեր ելլին.

— Ծո, Արտաշ; մըներ, մեղք և արեկող.. իսերդ կանիծեն:

— Դուք հոգ մընեք, իմ վրաս ձեռք դնողը գեռ մորմեն չե ծնած... ինծի Պլութ ողլու Արտաշ կըսեն..

Ցեվ ճիշտ ե, վոր վոստիկանը ընկըկեր և հեռացեր եր:

Այս լուրերը, վոր կտարածվեցին տուներու մեջ, թե հիացում կազդելին, թե սարսափ:

Մայրս մտիկ կըներ հորս բերած տեղեկութիւնները և բերանը չեր բացած վեր խոսք մը ընելու, կարծիք հայտնելու: Պարզ եր սակայն, վոր մտատանջ եր, բայց համառորեն կհուսար, վոր Արտաշես խելըը գլուխը պիտի հավաքի և ստանձնած գործը պիտի կատարե:

Առտու մը կանուխ, յերբ մայրս դրան սեմին վրա հացագործին կըսպասեր, դրացի կին մը հառաջացավ և ըսավ.

— Քուրենեկ, նորեն յերեկ գիշեր Արտաշը ապրու մը կերեր ե. ճամադուռ կոտրեր ե, բոլիսը կանչեր են...

Մայրս, կարծես խայթված, գլուխը ցցեց.

— Ի՞նչ ըսել կուպես, Աղավնի հանըմ:

— Ի՞նչ ըսել պիտի ուզեմ. շաշիւրնի ակս փարաները ձեռքը դրինք, մեխանեները կինդան կոր...

— Քու տված փաքաղ ինձմե պիտցիր, ըսավ մայրս և դուռը դոցեց դրացուհիին յերեսին:

Բայց բակին մեջ անիկա յերկու ձեռքերով գլուխը

\*\*\* ) Մալտահըափեր; բառացի՝ «կամ արդյոք ինձ ծուռ նայող»

բռնեց և սկսավ հիծկլտալ։ Ծանր վիշտ մը կքարանար սրտին վրա և խելազարի պես չորս կողմը կնայեր, կարծես ողնություն մը հուսափով։

Մտադրեցի Պետիկին խոսիլ, բայց ալ քանի մը որերե ի վեր դարձեր եր խուսափուի։

Պետիկն ալ տխուր եր և մտատաճջ, և կարծես շարունակ անլուծելի հարցումի մը պատասխանը կփնտուեր։ Բայց ինչ վոր ամենեն ավելի ցավ կպատճառեր ինձ, այն եր, վոր մեր թշնամիներն սկսեր ելին ուրախանալ և կարծես կհաղթանակելին։

Գել Նիկողոսը փավլիքային մեջ ծիծաղելով հարցուցեր եր բանվորներուն։

— Ե՞... ածուխը լերբ կտռնեք կոր, — և հոր դառնալով՝ նունիկ հանըմին ընե, մաղաղան պատրաստ բռնե...։

Քլոմուրճի Ավագ դռնե դուռ կպտտեր և բանվորուիները կդրգուեր Արտաշի դեմ։

Իմացա վոր այս շարթու աղեկ ածուխ պիտի իջեցնեն գեղերեն, ըսեք Արտաշին, թող նայի. չես պիտի առնեմ, ինչուս պետք, անա ձեր աղեկությանը համար կըսեմ կոր։

Վոմանց ալ կհայտներ։

— Լսեցի վոր լեկող շարթու գիները պիտի բարձրանան, ատեն ե, որ մի կորսնցնեք։

Ցել իրավամբ, գչուղերեն ածուխով բնոնավորված սայլերը կիջնեյին Սկլուտար, կանգ կառնեցին Հայոց գերեզմանատան անկյունը, Հաճախորդները կերթային, կդիտելին, խորհրդածություններ կընելին փայտածուխին ու գինին վրա, և իրար կքաջակերելին գնելու համար։

Հետզհետե լուր տարածվեցավ, վոր մեծատուններն իրենց ածուխը կդնեն: Բայց ինչ վոր խայթեց բան-վորները, այն եր, վոր լազմալի գործատերերը կշտապելին իրենց առքեկան փայտածուխը մթերելու: Դոնեղուու, պատուհանե պատուհան, թաղերու մեջ կիները կլուսեցին.

— Կոկանենք լերկու արաբա առեր, ներս նետեր են. Զեվիկենց արաբան լեռան պես բարձր եր... Ավուրտենք լետ պիտի կինային, միտքը փոխեցին, ասին. անոնք իրենց ըրածը գիտեն...

Բայց ամենեն մեծ չարիքը կգործեր Արտաշի յեղբայրը՝ Խաչիկ: Անիկա սրճարաններուն և գինետուններուն մեջ կգրգռեր բանվորները Արտաշի գեմ

— Ծո՛, խելքերնուդ պտուկը սիրեմ..., տղբարս ե, ամա յես շիտակը խոպող մեկն եմ. Ենչ խեր ունեցեր ե ինքինքեն, վոր իրմե խեր սպասելիք... հիշանոր շվանով հոր կիշնովիք...

Հետո խորհրդավոր կերպով կավելցներ.

— Ինձմե գիտցած մ'ըլլաք, այս գործին վերջը գեղ ե... իրեն հետ հալիսն ալ պիտի վտան... մնացածը դուք գիտեք...

— Ե՛, բանը բանեն անցեր ե,—կպատասխանելին Խաչիկին, ալ հիմա թնչ կընան ընել...

— Քացեք յետ ուզեցնք ձեր փարաները:

Այս լուրերը մեզ կըերեր Հայրապետ ամուճաս, և կակարագրեր թե ինչպես Սիլինտարի և Յենի Մահալելի բանվորները և բանվորուհիները հուզմունքի մեջ եցին. հետո դանդաղորեն սիկառեթը վոլորելով կխորհրդածեր:

— Ողորմած հոգի հարը կըսեր, վոր լերեսուն աա-

ըին մեյ մը խազեալ \*) մը աշխարհը կուղա: Բայց աստված ըրածը գիտե, բանով մը կզսպե... շատ անդամ կին աշխարհ կուղա... տունե տեղե հեռու ըլլա, տուանկներն իրենց շուրջը կերեն, կմըկեն, բայց կնիկությունը կզսպե... անեն զուրս բան չեն կրնար ընել. Արտաշ ալ խազեալ ե... ան ալ դապողը չքավորությունն ե...

Բայց անմիջապես Խաչիկին ակնարկելով, կավել ցնել:

— Ան ալ Շիքառ մը չե յա... խոսքն ալ արժեք չունի... յերկու աղբար միշտ շուն ու կատու յեղած են...

— Յես պիտի յերթամ Արտաշին խօսի՛, — ըստ իրիկուն մը մայրս վճռականությամբ:

Հույըս ու հորեղբայրս միջամտեցին.

— Նունիկ, ատանկ բան չընես... դուն չես ճանչնար Արտաշը. պիտիս ինչ դարձեր ե... հետը խոսի չըլլուք...

— Պիտի յերթամ, ըստ մայրս և բոռնցքը զարկավ թեղեյանին. յերթամ, պիտի խոսիմ հետը... իմ պոչիս կոխել չըլլար... թող հասկնա, վոր բաղնիքը խենթ կա յեղեր... պիտի՝ յերթամ...

Յեզ շարունակեց կատաղությամբ բանիլ:

\* \* \*

Հետեյալ որը, յերեկոյին, յերս դպրոցեն վերադարձա, զդացի վոր արտակարդ բան մը պատահած եւ Քուլը, և յեղբայրներս շշմած եցին, և ինձ կուղղեցին անձկալի նալլածքներ: Մայրս թեղկյանին առաջ նստած կաշ-

խատերու Զալս ձեռքը դրեր եր ճակտին, և աջ ձեռքով  
վրձինը կքսեր լազմալին գծագրված ծաղիկներուն  
վրա։ Ամեն անգամ վոր ներկի հողե ամանը կտեղա-  
փոխեր, կտեսնելի վոր անոր վտիտ մատները կդողա-  
յին, Նշմարեցի նաև, վոր աչքերը կարմրած ելին։ Դի-  
տեր ելի, վոր յերբ մայրս վիշտ մը, կամ հուզմունք  
մը ունենար, յերբեմն կհեծկլտար, բայց յերբեք չեր  
արտասվեր, անիկա չոր աչքերով և լոելլայն կմաքա-  
ռեր իր ներքին զգացումներուն հետ։ Մորս աչքեն  
արցունք կժայթքեր միայն, իերբ բարկության ծայրա-  
հեղ աստիճանին կհամներ, և հալանի յեր, վոր աչդ-  
պիսի բան մը պատահած եր։

Յերեկոյին, յերբ հայրս տուն յեկավ, հասկցա մորս  
բարկության պատճառը։ Արտաշ անհետացեր եր. մեկ-  
ներ եր առանց վոևե բան ըսելու, և գինետուններու,  
սրճարաններու, փավլիքալին և թաղերու, տուններու  
մեջ կըսելին, վոր ան յելիր գացեր եր բանվորներու  
դրամը մեջքի գոտիին մեջ կապած։

Լուռ ճաշեցինք, և լուռ սպասեցինք վոր մեր պառ-  
կելու ժամանակը դա։ Հայրս բազմոցին վրա իր սո-  
վորական մրավիեն արթննալով, սկսավ խոսիլ մորս  
հետ։ Անոր ճալնը թախիծով լի յեր և կպատմեր թե  
ինչպես դյուշմանները կխնդալին իրենց վրա։ Քյո-  
մուրձի Ավագը զինետան մեջ հավաքեր եր «իր նման-  
ները», կիմցներ և կպատմեր թե Արտաշ իր հորը պես  
խաչաղ \*), լեղեր եր։

— Զոլուխ չոճուխի բերնեն կտրեցինք, — կըսեր  
հայրս լալագին, — փարաները ձեռքը դրինք, ուրիշին

\* ) Փախստական

ալ սեբեք \*\*) լեղանք... Նունի՛կ, կտվելցներ ան հանգիւանական շետով, տեսնողը լերեսս վար կառնի կոր, հանցավորի պես եմ, մարդու յերես տեսնելու հավեա չի մնացեր...

Մայրս միշտ լուռ կմնար, և լերբեմն անհամբերության հառաջանք մը կարձակեր: Կամաց կամաց հորախոսքը սակավացավ, մորս լուռթյունը դարձավ սպառնական: Վերջապես լուրսը մարեցին և պառկեցան: Բայց մինչև լուսաբացին լսեցի մորս հեքոտ շնչառությունը: Մենք լերկուքս անքուն ելինք, կտառապետինք, և զգացի, վոր մորս և իմ ցափս մեկ եր:

Եհրը առավոտուն ծանր և կարձատե քունե մը յետքը տչքերս բացի, մայրս կրակարանին առաջ խանգե կպատրաստեր: Սև հեղուկը զեղեր եր տաք մոխիրին մեջ, և այրած խանգելի հոտով լեցվեր եր սենյակը, մայրս աչքով-ունքով մինակը կխոսեր և զրժները կդողալին:

Անցան որերը այս լարված վիճակի մեջ, անցավ շաբաթը, և ահա այլևս ամեն մարդ համակերպած եր, յերբ ուրախ լուրը պալթեցավ թաղիրումէի: Արտաշ գլուզերը գացեր եր տեղվույն վրա գնելու համար փոյտածուխը:

Ուրբաթ, շաբաթ և կիրակի, անընդհատ լազմաճի եսնափին ածխաբարձ սալվերը կիջնելին գյուզերեն, կոգալին թոփհանե ողլուի լայն պողոտաչեն, կանգ կառնելին գերեզմանատան տառջ: Եհրը Սելամօրդի և իճատիելի ունենորները լեկեր ելին փայտածուխ ընտրելու, սալլաւանները հայտաբարեր ելին, «Ճախուչե, լազմաճիներուն ածուխն ե»:

\*\*) Պատճառ:

Սիլինտարեն, Յենի Մահալելեն, Վանքին պաղեն,  
Պյուլիուլ Տերեսիյեն, Տաղնամամեն բանվորուհիներ  
քան-գործ թողած կերթալին տեսնելու «իրենց ածու-  
խը»: Քլոմուրճի Ավագը, կըսեր հայրս, «ամոթեն ծակ  
մը մտերեա»: Մալրս հազիվ սթափած իր ցասումեն և  
հուսախարութենեն շվարուն ձեւ մը առեր եր: Անիկա  
գերջապես, հուզմունքեն զինաթափ, հորս խոստովա-  
նեցավ.

— Այ մարդ, յերբ վոր լսեցի, գիտես, վոր սիրու  
զեր յելավ... մի մեղագրեք ինծի, խենթ խուշ զարձել  
եմ... չիտեմ քի խնդամ մի լամ...

Չարաթ իրիկուն Հայրապետ ամուճաս յեկավ մեղի:  
Կարմիր թաշկինակին մեջ կապած չոր թուզ բերել  
եր «չոճուխ» ներուն համար: Անիկա ուրախութենեն կը  
խայտար: Գացեր տեսեր եր լաղմաճիներուն ածուխը  
և դեռ դրան սեմին վրայեն սկսավ գովքը ընել,

— Վայ Արտաշ, վայ, կգոչեր խոսքը ընդհատելով,  
վորդի հարազատ, Պլութ էենիսիսի...\*)

Եեվ սրտին դեղումը արտահայտելու համար սկսավ  
խոսիլ Պլութի վրա: պատմեց անոր քաջագործություն-  
ները և անոր մահը ու իր բեկրեկ ձայնով սկսավ  
տեսթան լերդել:

— Հեյ զիտի Պլութ, հել, դւն ալ մեռնելու մարդ  
ելի՛լ, պէ՞...

\* \* \*

Առավոտ կանուխ հայրս գնաց շուկա և լերկու  
վոչխարի զլուխ բերավ մեր կիրակնորիա խնճուքին

\*) Ինքն լսէլ (Պլութը ինքն իսկ)

համար։ Յեղբայրներս գացեր ելին ածուխի սալլերը տեսնելու և քոյլը սենյակին մեջ դպրոցական լերք մը կերպեր իր քաղցր ձայնով։ Յես կոգնելի մորս տնական զործերուն։ Յերբեմն կերթալի մորս պատվերին վրա նպարավաճառին բան մը դնելու և դարձիս միշտ կգտնելի սայրս իր զուսպ ուրախության մեջ։ Անոր նալլը \* յներուն համաշափ ձայնը իոնանոցի սալաքարերուն վրա, լվացած պնակներու իրար բաղխումը ծնծղաներու պես ուրախ կհնչելին և կարտահալտելին մորս զգացումները։ Անոր սև աչքերը յերբեմն կանգ կառնելին վրաս և կըսեր սրտագին։

— Աղուլ.. առանց խոսքը ամբողջացնելու։

Ճաշեն հետո հայրս առաջարկեց ինձ վոր քիչ մը լերկնանք բարձունքը։

Սա մեր սովորական պտույտն եր. կքայլելինք անխոս նույնիսկ յերբեմն իրարմե հեռու։ Կանցնեյինք Սելամսըդի թաղեն, ուր հին ընտանիքները մեծ մաս սամբ «Տյովիեր դյուքյունի» \*\*), իրենց հին փայտաշին տուներուն մեծ կապելին ամբափակ, Սուրբ Խաչ շիկեղեցին շուրջ բոլորը, Սելամսըդին կանցնեցնք Իձատիցե, վոր առավելապես բնակված եր գավառացի վաճառականների։ Կհասնելինք վերջապես հայկական թաղերուն սահմանը, ուրկե հետո մեր տուաջք կբացվելին դաշտեր և արտեր, և հեռվեն կտեսնելինք մեծ և կիոքը Զամլճանները։ Հայրս կնախընտրեր նստիւ դաշտը մեջ. գետինը, խոտերուն վրա և սիկարեթ մը ծխել, բայց յես կջանայի մղել զինքը դեպի հրեաներուն գերեզմանատունը, ուրկե հետո կհասնելինք

\* ) Փառյա վոտնամաններ։

\*\*) Իշխանութենե ինկած։

Թրենկի լեռը։ Այնտեղ դարվերի գոտաթին, մեր առաջ կպարզվեր Վոսփորի մեկ զմալելի տեսարանը։ Հայրա գոհ կըլլար ըսելով. թե հով կա, անուշ կիչե և յես աչքերս բացած հիացումով կիրելի բնության տեսարանին սփոփարար տպավորությունը։

Այս առաջամ, սակայն, յերբ դաշտերը հասանք, հայրս ցուց տալով մեր սովորական ճամբուն հակառակ կողմը, ըսավ։

— Յեկներ ալսոր մյուս կողմը յերթանք։

Ես խայտալով վազեցի իր առաջքին։ Կտրեցինք դաշտը և հասանք բոսթալի ճամբան։ Փարնանալին արել մեր գոտքերուն առաջք կփռեր լուսահեղ ճանապարհը։ Կառքերու անցքին՝ վոշին ամպի պես կրաքձրանար և կխափաներ մեր տեսողությունը, բայց արդեն հեռվին կլսեցինք դոռում դոչում, ուրախ ճիշեր և բազմության ժիրը։ Ամեն թաղերեն մարդիկ յեկեր ելին դիտելու անսովոր իրողությունը։ Նույնիսկ դաշտին մեջ, ձեռ սուները, խումբ-խումբ ճարդիկ խանդով կխոսակցելին։ Ասոնք հայտնի առետրականներ ելին և կզգուշանացին հառաջանալ ու խառնվիլ բազմության։ բայց ատենը մեյ մը, իրենցմե մեկը կանջատվեր կուգար, կդիտեր և տեղեկություններ կտաներ խումբերուն։ Այդ միջոցին յես ու հայրս կմոտենալինք բազմություն։ Նինար և բարձրահասակ մարդ մը, վոր՝ խումբերեն յեկեր եր, ուզեց ինձ հրել առաջ անցնելու համար։ Յես հազիվ թե սալթաքեցա, լազմաճի բանմոր մը բռնեց թեսս և սոսկալի հայ հոյություն մը ուղղեց մարդուն հասցելին։ անիկա կանգ առավ և փոխանակ լազմաճի հիման պատասխանելու, խիստ անարկով մը նայեցավ ինձ։ Իմ հիշողությանս մեջ մնացած և անոր նոր

սափրված և պիրկ այտերուն փալը, պեխերը, վորցուցամատով և բժամատով կստուրեր դեպի դուրս հայրս այդ ակնարկեն ազատելու համար ինձ, թեև քոնեց և հառաջացուց, և իմ հարցական նայվածքիս պատասխանելով, ըստավ.

— “Եթես\*?) Սարգիս աղան ե... չամչնա նե ինկած քոմուրները կժողվե տուն կտանե...”

Բայց արդեն մեր ուշադրությունը ամբողջովին դարձավ սալլերուն և անոնց շուրջը խոնված բազմության վրա:

Այնտեղ եր Պետիկը և իր գասարանի բնկերներեն մեկ քանին: Այնտեղ եյին նաև Կել Նիկողոսը և Քումուրճի Ավագը. անոնք ածուխ գնելու պատրժակին տակ կմոտենալին սալլերուն և ցած ձայնով կխոսակցելին իրար հետ: Այնտեղ եիին նաև զանազան թաղերու վոստիկանները, վորոնք կարգը պահպանելու համար կմիջամտելին և լիրքեմն աւ իրենց մտրակները շաչեցնելով, դեպի յետ կմղեցին հավաքված բազմությունը: Բայց լերը «յերեկելի»-ի մը հանդիպելին, ձսոքերնին իրենց ֆեսին կտանելին բարեկը տա համար և ճամբար կուտալին, վոր անցնին:

Այդ բոլորը շելին վրիպեր ուշադրութենես, բայց իմ ամբողջ ատածումս սկսուած եր մեր սալլերուն վրա, վորոնք դյուրին եր վորոշել, վորովհետեւ զարդարված ելին կանանչ վոստերով և նույն իսկ սալլատար գործեղներու ճակատները և յեղջւուրները կկրելին կլիսին-ներու վողկուլզներ:

Հայրս թուշը ցցած կնալեր զմայլանքով, Անոք

\*.) Ժաման

խորշոմած դեմքը պլարզվեր եր և շրթները սեղմված  
ելին հիացիկ լոռւթյան մը մեջ։ Իմ ուրախությունն կա-  
տարւալ էեղավ, յերբ Պետիկ քովս յեկավ և իր թեը  
դրավ ուսիս. անոր հանդարտ նայվածքը լի էիր գոռ-  
հացումով։ հանուարծ ինձ բան մը մատնանշեց աչքերս  
դարձուցի այն կողմը և տեսա Արտաշը սև ձի մը հե-  
ծած։ անիկա վարդ խոթեր եր Փեսին մեկ կողմին, ա-  
կանջին վրա և հաղթական կանցներ սայլերու քովեն։  
Կարճ կոճուկը բաց եր կուրծքին վրա և կարմիր գոռ-  
տին պիրկ կպարուրեր անոր մեջքը և կործքը։ Մեկ  
ձեռքով բռնած եր ձիուն սանձեն և մյուս ձեռքը դրեր  
եր մեջքին՝ կարճակոթ դաշունին վրա։

Հետիոտն վոստիկանները կընկըկելին իր ձիուն  
քայլերուն առաջ, բայց անոնք խօժոռ ելին և խոհուն։  
Հետզհետե ազաները կհեռանալին, բայց յազմաճի-  
բանվորները և բանվորունիները կմոտենային սայլե-  
րուն և խոսքեր կուղղելին Արտաշեսին։

— Յաշամ... Արտաշ, մեկ որդ հազար ըլլա...

— Կտրիճ մարդ ես, Արտաշ, մեր թև ու թիկունքը  
դուն ես...

Արտաշես կժպտեր ամենուն։ վերջապես ձեռքով  
նշան մը ըրավ սալապաններուն բելիզին և ածխա-  
բարճ սայլերը սկսան սեկ-մեկ հառաջանալ։

Ծաղկազարդ գոմեշները կըսշեյին ճռնշացող սայ-  
լերը, վորոնցմեկ կանանց վաստեր կիւնալին զետին։ Բոս-  
թա լոլին տոնական յերեռութ մը ստացեր եր։ Հան-  
կարծ լսվեցավ Արտաշի գոռ աղաղակը։

— Յաղմաճի ևսնաֆին քյոմուրն ե, ճոմբա բացեք...։

Սայլերը կհետեւելին սայլերուն, կիջնալին դեպի

թաղերը։ Պատուհաններեն կիներ մինչև մեջքերնին կախված իրարու կհաղորդելին։

— Յազմաճիներուն քյոմուրն ե, լես տասը արաբա համբեցի։

— Տասը արաբային խռոքը կը լլա...

— Մեր քյոմուրն ե... կըսերին պատուհանե պատուհան բանվորական թաղերու մեջ և հպարտությամբ կհայտարարելին։

— Եսնաֆը վոր միանա, ինչեր չե կրնար ընել...

— Ես հայրիկիս և Պետրիկին հետ հետեւցա սալլերուն մինչև Պելլերին պարտեզը և հետո շտապեցի տուն մայրիկիս լուր տալու համար։

Այն իրիկուն Պլուլպուլ Տերեսիի տնակներուն մեջ լամպաները ուրիշ փայլ ունեին և բոլոր դեմքերը կը ինդային Գիշերը վրա համնելեն յետքն ալ դեռ գրացիները տան սեմերու վրա կդանդաղելին և իրարու կըսելին։

— Քուրուկ, դեռ մինչև որս ատանկ քյոմուր չե մտած քիպարներուն տունը...

— Յազմաճի եսնաֆը վլուգելա\*) լեղավ.. քան, ասանկ ըան մեր տեսնված եր։

Տուներուն դռները բաց ելին և բակերը կրղջային փեթակներու պես Յերբ վերջապես ամեն մարդ իր տան մեջ փակվեցավ, դեռ կարծես հաղորդակցությունները չի դադրեցան և լես զգացի, վոր սիրտս կտրու փեր ամենուն կուրծքերուն մեջ։

\* \*

Մայրս զուսպ եր իր ուրախության մեջ, բայց իր գոհունակությունը կժայթքեր իր աչքերեն, իր շարժ ու

\*) Բարձր դասակարգ։

ձեւն և մանավանդ իր անսովոր գորովին, վոր կզեղուք մեր ամենուս վրա Անիկա հոգածությամբ շտկեց քրոջ վերմակը, լեռը պառկեցավ և իր տենդոտ ձեռքը իմ ճակտիս դնելով, վորը վերածվեցավ վորքրիկ ապտակներու այտերուս վրա:

— Այ մարդ, ըսակ վերջապես հորս գառնալով, վոր կոշիկները հանելու դժվարին գործով դրազած եր, նե խենթ եմ նե խոլոք... վոտքերուդ ջուր տաքցուցեր եմ, պիտի մոռնայի...

Ու ճաշեցինք համերաշխ, հագեցած մեր ուրախությունով:

Ու գիշերը տարածվեցավ մեր վրա ինչպես խաղաղության հովանի և մինչև ուշ ատեն լսեցի հորս և մորս խոսակցության մրմունջը, վոր այնքան տարբեր եր ուրիշ որերու խոսակցության մրմունջեն:

\* \* \*

Յազմաձիներուն ածուխը մթերված եր Յենի Մահալիեյի խանին նկուղը: Մթերանոցը կողպված և կրնքված եր և բանալին իրը ավանդ էմար եսնաֆիքսայային քով: Տուներու մեջ բանվարունիները յեռանդով կաշխատելին և անդադար կշաղակրատելին դեպքերու մասին: Մեր տան մեջ մարս այլևս չեր խոսեր անցուդարձերու վրա, բայց շարունակ նոր ծրագիւներ կլազմեր: Կարծես միտքը բացվեր եր նոր հորիզոններու վրա և իրիկունները հորս կհաղորդեր իր մտաղրությունները:

— Զորուխ չոճու խը հագվեցնելու համար, կըսեր ան, ինչև աճելին առնենք, կրակի գին ապրանք կբերեն Յերբըսին խոսեցա, Ելպիսն ալ խոսք տվավէ Մել

մը պարտքերնիս տանք, ալ ապրանք չի պիտի առնենք. Քիչ մը ատեն ակուա կսեղմենք, աճեմին տվածանիս մեկ կողմ կդնենք, շուկային կառնենք նախըթփարայով, մեր մեջը կրաժնենք. Ո՞վ կխառնվի մեզի...

Հայրս գլուխը կշարժեր և իր թերահավատությունը կհալտներ.

— Ատոնք աղվոր բաներ են, Նունիկ, ամա մեզի համար չեն:

Մարդրս տեղի չեր տար, Բայց փոխանակ զալրանալու, կջանար համոզել հայրս:

— Մենք ախմախ<sup>\*</sup>) ծներ՝ ախմախ մեծցեր ենք... ատոր համար ալ տիրացեր են մեզի, ինչ կուզեն կընեն...

Եյն ատեն հայրս ձախնը ցածցնելով կխռուեր դարձյալ խորհրդավոր վտանգի մը մասին, Կոր կթեածեր մեր զլուխներուն վրա Շշուկներ կալին, բան մը կպատրաստիր... Քյոմուրճի Ավագ գինով վիճակի մեջ ըսեր եր բանվորներու.

— Ատ ձեր ուրախությունը փորերնիդ պիտի մնատ:

— Ա՛յ մարդ, կըսեր մայրս անհամբերությամբ, ի՞նչ կծամծմես, շիտկե շիտակ շըսիս...

Հորս սարսափը կփոխվեր հիացիկ վողնորության և թուշը տնկած աչքերը քթթելով, կփսփսար.

— կըսեն կոր... Խուսը պիտի գա, սեղ աղատե... ամա մինչեւ գա... հվ վողչ կմնա, հվ կերթա..., կըսեն կոր արցուն պիտի թափի...

— Վ՞նչ, կըսեր մայրս, գլուխը շարժելով. ոռւսը վժըին ձեռքեն մեզ պիտի աղատե... Խուսը մեզի հաց,

<sup>\*</sup> ախմար:

Քյոմուր պիտի բերե... Քյոմուրծի Ավագն և ատ խոս-  
քերը մեյդան ձգողը, ատանկ չե... Կերկի իր գործին  
կուգա... Ռուսը չե, աստված է երկինքեն իշնա, մեզի  
համար մեկ ե... մենք մեր գործը նայինք, պոշ խոս-  
քերու ալ ականջ մի կախեր.

Թաղերու մեջ սական արդ զրուցները շրջան կը-  
նեյն. աստիճանաբար աշխատանքի թափը կթու-  
լանար. Մեկ կողմեն սարսափը և մյուս կողմենով  
հույսը մարդոց միտքերը կշեղեցնելին անմիջական  
ինդիրներն. Յերբ մայրս զրացուճիներեն մեկուն հեռ  
խոսեր իր ծրագիրներու մասին, այլիս անորոշ պա-  
տասխան կստանար.

— Կեցիր նայինք, քուրուկ, ժամանակները խառ-  
նակ են... սպասենք, տեսնենք ինչ պիտի ըլլա:

Իրիկուն մը ուշ տտեն մեր դուռը զարնվեցավ\*  
չալբապետ ամուճաս եր. անիկա տժգույն եր և սրունք\*  
Ները կգեղելին, Յերբ սենյակ մտավ, դեռ չի նստած  
հայտնից, վոր ձերբակալություններ և խուզարկու-  
թյուններ կատարվեր ելին:

— Սիմոնենց տունը կոխեցին, լերկու տոպրակ  
թուղթ տարին. տղան բռներ են Նալպանտենց տունը  
պոմպա վնտուեր են: Դպրոցը պիտի կոխեն լեղեր\*  
Յերկու դրսեցի վարժապետները բռներ զիմաց անցու-  
ցեր են:

Հետեւալ առտու կանուխ, լսեցինք, վոր Արտաշե-  
ալ բռնվեր եւ:

\* \* \*

Մղձավանջային որերը կանցնելին: Ամեն բռպե-  
հրազեններու պիս մեր ականջներուն կալայթեյին կո-

միտաճի, հնչակ, պոմպա, ոռւսը պիտի գա, Անգլիա  
սուլթանին բարկացավ և այլ այս կարգի խոսքերն  
Սարսափը տարածվեցավ բոլոր թաղերուն մեջ, կաս-  
կածը սպրդեցավ ամենուն սրտին մեջ: Քոմուքնի Ա-  
վագը հարցաքններ ելին, բայց անմիջապես արձակեր  
ելին: Թաղին վոստիկանները դարձան չերկչուղ ազգող  
անձեր և շշուկ տարածվեցավ, վոր հայ լրտեսներ կան,  
«պատերը ականջ ունին»... Վախը մտավ նաև բան-  
վորական տունները, վորովհետեւ Արտաշեսը ձերբակալ-  
ված եր վորպիս պետության թշնամի և վտանգավոր  
ապստամբ, նույնիսկ լրտերները գրեր ելին, վոր գրամ  
հավաքեր եր «ալպանելի նպատակը իրագործելու»,  
պոմպա պատրաստելու համար»:

Մայրս լնդվլիցավ այդ ամբաստանության դեմ և  
հակառակ հորս հորդորներուն, առավոտ մը կանուխ,  
աև քողը դրավ գլխուն և գնաց Մորուք Կարապետը  
տեսնելու, վոր դատական գործերով իզրադեր և կա-  
պեր ուներ իշխանությանց հետ:

Մորս կարծիքը այս եր, վոր չեթե բոլոր բանվոր-  
ները և բանվորուհիները, վորոնք հանգանակության  
մասնակցած են, հավաքապես բողոքեն և վկայեն, վոր  
Արտաշես դրամ հավաքած և ածուխ գնելու համար,  
խնդիրը կպարզվի: Բայց Մորուք Կարապետ խորհուրդ  
տվեր եր յետ կենալ այդպիսի քայլե մը:

— Պարապ տեղը ահալլին կերես, բոլոր մասնակ-  
ցողները մյուզուր<sup>\*)</sup> կդառնան, Արտաշի գործը դեղ և,  
գեշ<sup>2</sup>, Ֆենա<sup>\*\*</sup>)...

Դպրոցը Պետիկին հայտնեցի այս խոսակցության

\*\*) Գեշ:

\* ) Կասկածելի:

մասին: Ան զլուկիը շարժեց հուսահատ և առաջին անգամ ինձ պատմեց Արտաշեսի ձերբակարեան պարագաները: Տունը շրջապատեր ելին մեծ բազմությունով, զենքերը պատրաստ և, լերբ դրանը զարկեր ելին: Արտաշես հասկցեր եր և նետվեր եր՝ առաջ կռվելու համար, հետո միտքը փոխեր եր «անոնց ալ ուղածը ատե» ըսելովէ Հետո հանձնվեր եր վոստիկաններուն և մեկնած պահուն ըսեր եր Պետիկին:

— Պետիկ, ողլում, սիրող Ֆերանի \*) րոնե, յեսինքինքս կաղատեմ ասոնց ձեռքեն, մեր տլուշմաններուն ալ խերը կանիծեմ... որ մը անունս կիմանաք...

Պետիկ գետինը կնայեր և հաճախ կընդհատեր իր պատմությունը: Զայնը հուզմունքեն կդողար: Վերջապես ըսավ.

— Կարպին, յես ալ հորս լերեսը չեմ կարող տեսնել: Ան եր մատնողը...:

Քանի մը որ յետք Պետիկ փախավ տունեն: Անմտեր եր ոտար շոգենավ մը իբր փախստական և հեռացեր եր Պոլսեն:

\* \* \*

Անցան շաբաթներ, հետո ամիսներ: Կառավարության հրամանով և խուզաբերթյան պատրիակով բացվեցավ յազմաձիներու ածուխի մթերանոցը: Վոստիկանները հայտնի համարձակ, պարկերով ածուխին լավագույն մասը բեռցուցին ձիերը և իբենց տուները դրկեցին և մնացյալը տվին լեկեղեցիներուն, վոր անոնք աղքատներուն բաժնեն:

\*) Պայծառտ

— Քա, մենք ո՞վ, ձմեռվան քումուրը առնովը ո՞վ,  
կըսեր մեր դրկից հարևանուհին, պատահ գնատելու մուր  
խօժու լուսթենեն. Աղքատությունը միսերնուս փա-  
կած ե, պոշ տեղը չե՝ կըսեն կրակե շապիկ ե... ան  
պիտի հանենք, պատանքը պիտի փաթտվինք...

Ցեվ մայրս համառությամբ գլուխը կշարժեր ժըխ-  
տական:

Այդ որերու ընթացքին, թաղերու մեջ, նախ ան-  
հատներ և հետո խումբեր, գլուխ բարձրացուցին և  
ակսան բողոքել կատարված անարդարության դեմ. Ար-  
տաշես ունե կապ չուներ կոմիտաճիներու հետ և հա-  
վաքական ուժերով ձմեռվան ածուխը գնելը վոչ մեկ  
որենքի դեմ չեր: Յաղմաճիները կստիպեցին իրենց  
քենչան, վոր ւերթա Դուռը, Բաշա Գաբուսին և բողոքե-  
թայց ան որերեն ի վեր տունեն զուրս չեր լելեր և  
դիմողներուն կաղերսեր.

— Վոտքերնիդ պապնեմ, ինձ զոռը մի դնեք, չո-  
լուխ չոճուխի տեր մարդ եմ, չեմ ուզեր վողք գլուխա  
ավետարանի տակ գնել:

— Թու, կթքնելին լերեսին բանվորները, աս ալ  
մարդ ե, վոր քենչա ընտրեր ենք:

Բանվորուհիները գաղտնի դրամ կհավաքելին դա-  
տավորները կաշառելու և Արտաշեսը ազատելու հա-  
մար: Իսկ սրճարաններու և դիմեատներու մեջ բան-  
վորներեն վոմանք հայտնապես կըմրոստանալին թե՛  
զեղծարտը վոտիկանության դեմ և թե՛ լազմայի զոր-  
ծատերերուն դեմ, վորոնց մատը կա, կըսելին, պատա-  
հած դեպքերուն մեջ: Ամենքը համաձայն եյին, վոր  
եսնաֆը իր վոտնակոխված իրավունքերը պետք է

պաշտպանե, բայց վոչ վոք վորոշ ծրագիր մը կառա-  
ջարկեր:

Այդ միջոցին մալրս բանը-գործը թողած, հակա-  
ռակ վոր սրխուեր \*) եր, ամեն որ փողոցները կչափեր:  
Ան կերթար Յենի մահալե, Սիլինտար, Տաղնամամն  
աշխատակցելու ան բանվորուհիներու, վորոնք ամեն  
վտանգ աչք առած մտադրը ելին Արտաշն աղատելու  
համար գումար մը գոյացնել:

Մայրս կրկին գնաց Մորուք Կարապետին և կա-  
շոք իսոստացավ:

— Աս մւր տեղեն և ձեր փարան, հարցուցեր եր  
Մորուք Կարապետ կասկածանքով:

Մայրս հասկցեր եր, վոր պետք չե ընկերները  
բերան տա և ըսեր եր.

— Տունս կծախեմ, կուտամ: Իմ խոսքս բերնես կելի:  
Յեկեղեցին և թաղական խորհուրդն ալ ի՞ր կարգին  
գիմումներ կըներ բանտարկչալներն աղատելու համար:  
Պատրիարքարանը դիմեր եր դեսպանատունները ձեր-  
բակալված հայերու ազատ արձակումը ինդրելով: Մի-  
քեն ինձ հաղորդեց այդ մասին և ըսավ թե Սուլթանը  
կդողա դեսպաններին: Պայրամը մոտ եր և կհուսացվեր,  
վոր ալդ առթիվ Մուլթանն ընդհանուր ներում շնորհե  
կոմիտաճիներուն:

\* \* \*

Կարճատե սրխուերեն հետո, վորու միջոցին շատերը  
չելին կրցած աշխատիլ չքավորությունն ավելի դաժան  
և ավելի անողոք տեղափորվեր եր մեր տուներուն մեջ:  
Դարձլալ աճեմը կատաղած կիցեր կուտար մեր դրանը:

\* ) Մտիողողական պատվեր:

Թաթիլներն իրարու լիտենե կհամնելին և հայագործն  
հաճախակի ձիուն սանձը կքաշեր և կանցներ առանց  
մեր դրանը զարնելու Դարձլաւ, քուլրս տժկույն և  
նիհար յերկնցեր եր բազմոցին վրա և տան տխուր  
լոռւթյունը կիսղեր իր հազավը Իրիկունները հալրս  
որ որի ավելի կքած և հետզհետե ավելի անզթորեն տա-  
ռապելով իր վոտքերեն, կտքար, մինչ մայրս կրանեթ  
թեղլւահին վրա և յերբեմն ապան կսրեր պատռելու  
ծշող աղմուկ մը առաջ բերելով Դարձլաւ զիշերվան  
ժամերուն, լերը մենք պառկած կրլայինք, հալրս կիսու  
սեր վողբազին ձախով անգերջ հոգերու վրա ։ Մայրս  
ընդհանրապես լուռ կմնար, բայց դեմքը կստանար  
յերբեմն դառն հեկնություն և յերբեմն ալ ցանումի  
արտահայտություն, բայց հաճախ ան կմնար մտախոհ  
ինչպես մեկը, վոր իր ելության խորն անդրդվելի հե-  
նարան մը գտած եւ

Այսպես կանցնելին որերը, յերբ վեջապես պայրամը  
լիկավ և սուլթանական ներումը շնորհվեցավ։ Սկզու-  
տարի բանտարկւաները վերադարձան իրենց տուները,  
բացի Արտաշեսեն և յերկու դրսեցի գարժապետներեն,  
վորոնք, ըսվեցավ, թե իրենց բնիկ գավառները դըրկ-  
վեցան։ Յազմաճիները ժամեմաժամ կսպասելին Արտա-  
շեսի վերադարձին։ Բայց որերը կհաջորդելին իրարու  
և Արտաշեսը շեր յերեար, Մայրս տենդազին անհամա-  
րերության մեջ եր. վերջապես չդիմացավ և ինձ հետ  
անզամ մըն ալ գնաց Մորուք կարապետին։

Ցանցառ մորուքով, կարճահասակ, կնդած զլիուն  
ձերմակ գդակ մը դրած, մանր և խուսափուկ աչքերով,  
Մորուք կարապետը լսեց մորս խոսքերը։ Մարս կը  
դանզատեր թե բոլոր կոմիտաճիները տուն դարձան,

մենակ Արտաշես, վոր այդ գործիրուն հետ կտակ չուներ, մնաց:

Այս ատեն Մորուք Կաբաղետը ըստվ խորհրդավոր կեպով մը.

— Խոսեցա գատըին\*) հետ, կաշառք ալ խոստացա: Մարդու կճանաչնամ, հաղաք անդամ գործ ունեցած եմ իրեն հետ: Այս անդամ ճար չկա: Անիկա ինձ ըստվ: «Կաբաղետ, դուն մի խառնվիր Արտաշի գործին, գեշ, զեշ գործ եւ Անոր կերած ապուրը հեշ մեկուն կերած ապուրին չի նմանիր... յերանի՛ թե կոմիտանի ըլլար...»

Այն ատեն վոչ չես և վոչ մայրս հասկցանք ալլ խոսքիրուն խմաստը, և լերք վերջապես մայրս սթափեցավ իր ապշութենեն, ձեռքես բռնեց և դուրս յերածք:

Անցանք փողոցներեն առանց իրարու հետ խոսելու: Մայրս կքալեր գլուխը բարձը, աչքերը հրացայտ, այտերը վառած, տենդաղին կտրմը ունեցավ: Անոր քայլերը չեր և ճամաչափ կհնչեցին սալտքարերուն վրա: Յերբ տուն մտանք, տեսա, վոր կը ուղար բռլոր մարմնովը: Հանեց գլխուն սև քողը, նետեց մեկ կողմի և խելագարի պես գոչեց, բռունցքը ցցելով.

— Ողբել, մենք առ աշխարհիս անիծվածներն ենք... Յեվ անդամ մըն ալ ցասումի արցունքներ ժայիշքեցին մորս աչքերեն:



\*) Դատավոր:

այլ բառ ունեցած է այսպիս որ ոյլ ականավ ամսեն  
առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ  
առ  
առ  
առ  
առ  
առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ առ





8965

2013

Մայ. 97. Բ. 221

Գրան 45 Կ.

Կազմ 20 Կ.



ՅԱՅԵԼԵՍԱՅԱՆ  
Ծառանալ բանակ  
ԳԻՅ ՀՀ Հայաստանի Հանրապետություն